towards the european higher education area
bologna process

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
ԱՆՏԱՐԵՍ
2008

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Ս 259

Ուղեցույցը հրատարակվել է ***Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի*** *դրամաշնորհի միջոցներով*

Ս 259 **ՍԱՐԳՍՅԱՆ Յու.Լ., ԲՈՒԴԱՂՅԱՆ Ա.Ս.**
Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց.-**Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն**.-Եր.: Անտարես, 2008. - 74 էջ:

Ուղեցույցում նկարագրվում են Բոլոնիայի գործընթացի նպատակն ու խնդիրները, ինստիտուցիոնալ կառուցվածքը, պատմական ակունքները և զարգացման ժամանակագրությունը, մանրամասն տեղեկություններ են ներկայացվում Բոլոնիայի գործողությունների սահմանված 10 ուղղությունների զարգացման և առկա վիճակի վերաբերյալ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում և Հայաստանում: Ուղեցույցն ունի էլեկտրոնային տարբերակ սկավառակային կրիչի վրա՝ լրացուցիչ տեղեկատվական աղբյուրների “on line” ռեժիմով օգտագործման հնարավորությամբ:

Հասցեագրված է ուսանողներին, դասախոսներին, բուհական վարչակազմին և ընդհանրապես բոլոր նրանց, ում հետաքրքրում են Բոլոնիայի գործընթացի նորագույն զարգացումները և հեռանկարները:

Երաշխավորվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից որպես Ուղեցույց բուհերի համար:

Խմբագիր՝ Հ.Պետրոսյան

ԳՄԴ 74.58

© ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ 2008թ.

ISBN 978-9939-51-038-5

Բովանդակություն

Նախաբան 6
Ներածություն 7
Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ 7
Բոլոնիայի գործընթացի նպատակը և խնդիրները 7
Բոլոնիայի գործընթացի գործողությունների 10 ուղղությունները 9
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 10
Առանցքային տարեթվեր Բոլոնիայի գործընթացում 11
Սորբոնի 1998-ի հռչակագիրը 11
Բոլոնիայի 1999-ի հռչակագիրը 11
Եվրոպական համալսարանական ասոցիացիայի ստեղծումը 2001-ին . 11
Պրագայի 2001-ի նախարարական գագաթաժողովը 11
Բեռլինի 2003-ի նախարարական գագաթաժողովը 12
Բերգենի 2005-ի նախարարական գագաթաժողովը 12
Լոնդոնի 2007-ի նախարարական գագաթաժողովը 13
Բենիլյուքսի 2009-ի նախարարական գագաթաժողովը 14
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 15
Որոշումների ընդունումը Բոլոնիայի գործընթացում 16
Միջպետական գործընթաց 16
Նախարարական գագաթաժողովները 16
Բոլոնիայի գործադիր խումբը 16
Բոլոնիայի խորհուրդը 17
Եվրահանձնաժողովի դերը 17
Այլ կազմակերպություններ 18
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 19
Հիմնական դերակատարները Հայաստանում 20
ՀՀ կառավարությունը 20
Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգայինտեղեկատվական կենտրոնը (ArmEnic) 20
TEMPUS-ի ազգային գրասենյակը Հայաստանում 21
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստանը 21
Կրթության ազգային ինստիտուտը 21
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 22
Հիմնական դերակատարները եվրոպական մակարդակում 23
Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA) 23
Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE) 23
Ուսանողների եվրոպական միությունը (ESU) 23
Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) 23
Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) 23

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) 24
ENIC-NARIC ցանցը 24
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոնը (UNESCO-CEPES) 24
Բոլոնիայի քարտուղարությունը 24
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 25
Բոլոնիայի գործընթացի մասնակիցները 26
Անդամ երկրները 26
Լրացուցիչ լիիրավ անդամ 26
Խորհրդակցական անդամներ 26
Անդամության թեկնածուները 27
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 27
Գործողությունների 1-ին ուղղություն 28
Դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում 28
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 28
Վերջին զարգացումները 30
Հայաստանի արձագանքը 30
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 32
Գործողությունների 2-րդ ուղղություն 33
Հիմնականում երեք աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում 33
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 33
Վերջին զարգացումները 33
Հայաստանի արձագանքը 34
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 36
Գործողությունների 3-րդ ուղղություն 37
Կրեդիտների համակարգի հիմնում 37
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 37
Վերջին զարգացումները 38
Հայաստանի արձագանքը 38
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 40
Գործողությունների 4-րդ ուղղություն 41
Աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական ու վարչական կազմի շարժունությանը 41
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 41
Վերջին զարգացումները 41
Հայաստանի արձագանքը 42
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 43
Գործողությունների 5-րդ ուղղություն 44
Աջակցություն որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցությանը 44
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 44

Վերջին զարգացումները 45
Հայաստանի արձագանքը 46
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 48
Գործողությունների 6-րդ ուղղություն 49
Բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում 49
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 49
Վերջին զարգացումները 50
Հայաստանի արձագանքը 50
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 51
Գործողությունների 7-րդ ուղղություն 52
Հարատև կրթության կարևորում 52
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 52
Վերջին զարգացումները 52
Հայաստանի արձագանքը 53
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 54
Գործողությունների 8-րդ ուղղություն 55
Բուհերի և ուսանողների ներգրավում 55
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 55
Վերջին զարգացումները 56
Հայաստանի արձագանքը 56
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 57
Գործողությունների 9-րդ ուղղություն 58
Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչության խթանում 58
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 58
Վերջին զարգացումները 58
Հայաստանի արձագանքը 59
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 60
Գործողությունների 10-րդ ուղղություն 61
Դոկտորական ծրագիրը և սիներգիան Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև 61
Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր 61
Վերջին զարգացումները 61
Հայաստանի արձագանքը 62
Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ 64
Բոլոնիայի գործընթացը 2010-ից հետո 65
Լրացուցիչ տեղակատվական աղբյուրներ 66
Բոլոնիայի գործընթացի տերմինարան 67
Օգտագործված հապավումներ 72

Նախաբան

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) պաշտոնական մեկնարկի՝ 2010-թվականին ընդառաջ դեպի այդ նշանակետը տանող Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ տեղեկատվական հոսքը գնալով ավելի է մեծանում և ճյուղավորվում: Տեղեկատվության նման բազմազանությունը միաժամանակ հանգեցնում է դրա անհրաժեշտ աղբյուրների որոնման և հայթայթման որոշակի դժվարությունների: Այս ուղեցույցը կոչված է մեթոդական աջակցություն ապահովելու ՀՀ բուհերի մասնագետներին և ուսանողներին այդ դժվարությունների հաղթահարման հարցում՝ օժանդակելով նրանց ներգրավմանը, լիարժեք մասնակցությանը Բոլոնիայի գործընթացով ուղղորդվող բարձրագույն կրթության բարեփոխումներում:

Ուղեցույցը պայմանականորեն կարելի է բաժանել 2 մասի: Առաջին մասում ներկայացվում են Բոլոնիայի գործընթացի նպատակն ու խնդիրները, դրանցից բխող գործողությունների հիմնական ուղղությունները, գործընթացի սկզբնավորման և զարգացման հիմնական տարեթվերը, ինչպես նաև վերջինիս ինստիտուցիոնալ կառուցվածքը, որոշումների ընդունման մեխանիզմներն ու գործընթացի հիմնական դերակատարները՝ ԵԲԿՏ-ում և Հայաստանում:

Երկրորդ մասն անդրադառնում է Բոլոնիայի գործողությունների 10 ուղղություններին առանձին-առանձին՝ բնութագրելով ԵԲԿՏ-ում և Հայաստանում գործընթացի առկա վիճակն ու առաջընթացի ցուցանիշները: Յուրաքանչյուր ուղղության համար նշվում են նաև զարգացման հիմնական փուլերը և կարգավորիչ փաստաթղթերը, արտացոլվում են Բոլոնիայի գործընթացի նորագույն զարգացումները Բերգենի 2005թ. նախարարական գագաթաժողովից հետո, մասնավորապես, 2007թ. Լոնդոնյան գագաթաժողովի հիմնական երաշխավորություններն ու գերակայությունները, ինչպես նաև հաջորդող գործողությունների ծրագիրը 2007- 2009թթ. համար:

Ուղեցույցի համար հիմք են ծառայել հեղինակների՝ Բոլոնիայի գործընթացին նվիրված նախորդող ուսումնասիրության[1] արդյունքները: Ավելի մանրամասն տեղեկությունների համար համապատասխան բաժիններում նշվում են լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ, իսկ սկավառակային կրիչով ուղեցույցին կցված վերջինիս էլեկտրոնային տարբերակը հնարավորություն է ընձեռում նյութը օգտագործել նաև “on-line” տարբերակով:

Հատուկ շնորհակալություն հայտնելով ուղեցույցի հեղինակներին՝ ակադեմիկոս Յու. Լ. Սարգսյանին, դոց. Ա. Ս. Բուդաղյանին՝ կատարված արդյունավետ ու օգտակար աշխատանքի և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան գործադիր տնօրեն Լ. Մինասյանին՝ ուղեցույցի ստեղծմանն ու հրատարակմանն աջակցելու համար, միանշանակ կարելի է արձանագրել, որ այն կարևոր ու պահանջված ներդրում է բարձրագույն կրթության բարեփոխումների մեթոդական գրականության ասպարեզում: Ուղեցույցը կօգնի բարձրացնելու ոչ միայն բուհական, այլև հասարակության ավելի լայն շրջանակի տեղեկացվածության մակարդակը:

ՀՀ Կրթության և գիտության նախարար՝ **Լ. Մկրտչյան**

[1] Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: ԲԿՈՀԱԿ, Վերլուծական զեկույց: ՀՀ ԿԳՆ-ԿԱԻ, Տեղեկագիր՝ Բարձրագույն կրթություն: Երևան, 2007: էջ 186-397:

Ներածություն

Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ

Բոլոնիայի գործընթացը միջպետական նախաձեռնություն է, որի նպատակն է մինչև 2010թ.-ը ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և նպաստել եվրոպական բարձրագույն կրթության գրավչությանն ու մրցունակությանը ողջ աշխարհում: Գործընթացն այսօր ներառում է 46 ստորագրյալ երկրներ և ընթանում է Եվրոպական միության (ԵՄ) որոշումների ընդունման ձևական շրջանակներից դուրս: Որոշումների ընդունումն այստեղ հենվում է մասնակից բոլոր երկրների համահամաձայնության վրա:

Բոլոնիայի գործընթացը մեկնարկել է 1999թ.-ին, երբ 29 եվրոպական երկրների կրթության նախարարները հանդիպեցին Բոլոնիայում և ստորագրեցին մի հռչակագիր, որն ամրագրում էր բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ էին մինչև 2010թ.-ը ԵԲԿՏ-ն ստեղծելու համար: Համաձայն Բոլոնիայի հիմնադիր հռչակագրի՝ ԵԲԿՏ-ն պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին հնարավորություն է ընձեռվում անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձրորակ բարձրագույն կրթության համար: Այսպիսի բաց տարածքի անկյունաքարերն են բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչումը, թափանցիկությունը և եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում:

Բարձրագույն կրթության և ընդհանրապես Եվրոպայով մեկ մարդկային ռեսուրսների որակի բարելավման իր մղվածությամբ Բոլոնիայի գործընթացը կոչված է առանցքային դեր խաղալու ԵՄ Լիսաբոնյան ստրատեգիայի նպատակների ձեռքբերման մեջ, որոնք հավակնում են ապահովելու երկարատև կայուն տնտեսական աճ, ստեղծելու ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղեր: ԵԲԿՏ-ի մյուս կարևոր առանձնահատկությունը եվրոպական բարձրագույն կրթության ընդգծված սոցիալական ուղղվածությունն է, որը ենթադրում է սովորելու և մասնագիտական ու ընդհանուր զարգացման հավասար հնարավորություններ բոլորի համար՝ հարատև կրթության համատեքստում:

Բոլոնիայի գործընթացի հետագա ընթացքը և նոր զարգացումներն ուղղորդվում են անդամ երկրների նախարարական գագաթաժողովների միջոցով: Սկսած 1999թ.-ից՝ նախարարներն արդեն հանդիպել են 4 անգամ՝ Պրագայում 2001-ին, Բեռլինում 2003-ին, Բերգենում 2005-ին և Լոնդոնում 2007-ին, գնահատել գործընթացի առաջընթացը նախորդող գագաթաժողովից հետո, նշել հիմնական գերակայությունները հաջորդ երկու տարիների համար: Հաջորդ գագաթաժողովը տեղի կունենա Լեովենում (Բենիլյուքս) 2009թ.-ին և կլինի վերջինը ԵԲԿՏ-ի պաշտոնական մեկնարկից առաջ:

Բոլոնիայի գործընթացի նպատակը և խնդիրները

Բոլոնիայի գործընթացի նպատակն է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) մինչև 2010թ.-ը և աջակցել բարձրագույն կրթության եվրոպական մոդելների տարածմանը ամբողջ աշխարհում: Կան

մի շարք առանցքային ոլորտներ, որոնց ուղղությամբ գործընթացը հատկապես կենտրոնանում է իր նպատակին հասնելու համար: Դրանք հայտնի են նաև որպես Բոլոնիայի գործընթացի խնդիրներ:

⇒ Ուսանողների և դասախոսների շարժունության խոչընդոտների վերացումը Եվրոպայի ներսում, ինչպես նաև դրսի ուսանողների համար դիտվում է որպես կարևորագույն գործոն ԵԲԿՏ-ի կառուցման ճանապարհին: Ընդլայնված շարժունությունն ապահովում է ուսանողների և դասախոսների կարիերայի ավելի մեծ հնարավորություններ եվրոպական աշխատաշուկայում:

⇒ Եվրոպական բարձրագույն կրթության համար անհրաժեշտ է համարվել ներմուծել բակալավրի և մագիստրոսի 2 աստիճանների վրա հիմնված ընդհանուր համակարգ: Համակարգի ընդգրկումն այնուհետև ընդլայնվեց այս երկու աստիճաններից դուրս այնպես, որ այժմ դոկտորական մակարդակի որակավորումները դիտարկվում են որպես երրորդ աստիճան Բոլոնիայի գործընթացում: Դա հնարավորություն կտա խթանելու ավելի սերտ կապերի ձևավորումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) միջև:

⇒ Դյուրընթեռնելի և համադրելի որակավորումների համակարգի ներմուծումը կպարզեցնի որակավորումների համեմատումը ողջ Եվրոպայում, իսկ դրանով ապահովվող ճկունությունը և թափանցիկությունը ուսանողներին և դասախոսներին իրենց որակավորումների ավելի լայն ճանաչման հնարավորություն կտան՝ նպաստելով շարժունության ազատությանը ավելի ու ավելի թափանցիկ դարձող ԵԲԿՏ-ի շրջանակներում: Այս գործընթացին կօժանդակի բոլոր մասնակից երկրներում կրեդիտների համակարգի հիմնումը՝ Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի և Դիպլոմի հավելվածի ներմուծմամբ:

⇒ Եվրոպայում բարձրագույն կրթության որակի բարելավումը և բարձր ստանդարտների ապահովումը միջազգային ասպարեզում ԵԲԿՏ-ն գրավիչ դարձնելու հիմնական բանալին են: Որակի ապահովման ասպարեզում եվրոպական մակարդակով համագործակցությունը և որակի հավաստման մարմինների համարժեք արտաքին փորձաքննության ապահովումը կօգնեն՝ հասնելու որակի ընդհանուր բարձր ստանդարտների ապահովմանը ամբողջ Եվրոպայում՝ դյուրացնելով նաև որակավորումների համադրելիությունը:

⇒ Բուհերը և ուսանողները կարևոր դերակատարություն ունեն Բոլոնիայի գործընթացում, համապատասխանաբար կարևորվում է նրանց ներգրավումը տարբերացված և հարմարունակ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ձևավորման գործընթացում:

⇒ Բոլոնիայի գործընթացն իր զորակցությունն է ցուցաբերում հարատև ուսումնառության գաղափարի ներդրմանը Եվրոպայում, ինչը կարևորվում է գլոբալ աշխատաշուկայում աճող մրցակցության մարտահրավերների դիմագրավմանը և նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործմանը նպաստելու տեսանկյունից:

⇒ Բուհերը պետք է մշակեն դասընթացներ և կրթական ծրագրեր էական և ընդհանուր եվրոպական բովանդակությամբ՝ բարձրա-

գույն կրթության եվրոպական չափայնությունն ուժեղացնելու նպատակով: Սա ենթադրում է նաև եվրոպական բուհերի միջև գործակցային կապերի ու համատեղ ծրագրային մշակումների խթանում, ինչպես նաև համատեղ որակավորումների հիմնում:

Բոլոնիայի, Պրագայի և Բեռլինի գագաթաժողովներում այս խնդիրները ձևակերպվեցին որպես Բոլոնիայի գործողությունների 10 ուղղություններ:

Բոլոնիայի գործընթացի գործողությունների 10 ուղղությունները

Սահմանված 1999թ.-ին՝ Բոլոնիայի հռչակագրով.

1. դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում,
2. հիմնականում երեք աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում,
3. կրեդիտների համակարգի հիմնում,
4. աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական ու վարչական կազմի շարժունությանը,
5. աջակցություն որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցությանը,
6. բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում.

Ներմուծված 2001թ.-ին՝ Պրագայի կոմյունիկեով.

7. հարատև կրթության կարևորում,
8. բուհերի և ուսանողների ներգրավում,
9. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչության խթանում.

Լրացված 2003թ.-ին՝ Բեռլինի կոմյունիկեով.

10. դոկտորական ծրագիրը և սիներգիան Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիա, 1997:
http://www.bologna-berlin2003.de/pdf/Lisbon_convention.pdf

Սորբոնի հռչակագիր, 1998: http://www.bologna-berlin2003.de/pdf/Soonne_declaration.pdf

Բոլոնիայի հռչակագիր, 1999: http://www.bologna-berlin2003.de/pdf/bologna_declaration.pdf

Սալամանկայի կոնվենցիա, 2001:
http://www.bologna-berlin2003.de/pdf/salamanca_convention.pdf

Պրագայի կոմյունիկե, 2001:
http://www.bologna-berlin2003.de/pdf/Prague_communiquTheta.pdf

Բեռլինի կոմյունիկե, 2003: http://www.bologna-berlin2003.de/pdf/Comunique1.pdf

Բերգենի կոմյունիկե, 2005:
http://www.bologna-bergen2005.no/Docs/00-Main_doc/050520_Bergen_Communique.pdf

Լոնդոնի կոմյունիկե, 2007:
http://www.dfes.gov.uk/londonbologna/uploads/documents/LC 18May07.pdf

2003-ի Բեռլինի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.bologna-berlin2003.de/

2005-ի Բերգենի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.bologna-bergen2005.no/

2007-ի Լոնդոնի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.dfes.gov.uk/londonbologna/

2009-ի Բենիլյուքսի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/

Բոլոնիայի գործընթացի 2007- 2009թթ. աշխատանքային ծրագիրը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/Bologna_work_programme_2007-2009_030308.pdf

Առանցքային տարեթվեր Բոլոնիայի գործընթացում

Սորբոնի 1998-ի հռչակագիրը

Սորբոնի 1998թ.-ի հռչակագիրը, որը ստորագրվել է Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Մեծ Բրիտանիայի բարձրագույն կրթության նախարարների կողմից, սահմանեց Բոլոնիայի գործընթացի հիմնական կառուցամասերը: Սա համահամաձայնության առաջին քայլն էր, ըստ որի եվրոպական բարձրագույն կրթության համակարգերը պետք է լինեն ներդաշնակ և համադրելի՝ եվրոպական բարձրագույն կրթության որակավորումների ճանաչումը և միջազգային մրցունակությունն ամրապնդելու համար: Հռչակագիրը ներառում է նաև որակավորումների երկաստիճան կառուցվածքի և կրեդիտների օգտագործման վերաբերյալ պարտավորություններ:

Բոլոնիայի 1999-ի հռչակագիրը

1999թ.-ին Եվրոպայի 29 երկրների բարձրագույն կրթության նախարարները հանդիպեցին Բոլոնիայում և ստորագրեցին հռչակագիր՝ մինչև 2010-ը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք հիմնելու վերաբերյալ: Բոլոնիայի գործընթացի սկզբնական խնդիրներն էին՝ Եվրոպայում ուսանողների շարժունության խոչընդոտների վերացումը, աշխարհում եվրոպական բարձրագույն կրթության գրավչության բարձրացումը, բարձրագույն կրթության համակարգերի համար ողջ Եվրոպայում ընդհանուր կառուցվածքի հիմնումը և այդ ընդհանուր կառուցվածքի՝ երկու հիմնական աստիճանների վրա հիմնվածությունը: Սա, իր հերթին, պետք է ապահովի ավելի մեծ թափանցիկություն և որակավորումների պարզեցված ճանաչում:

Եվրոպական համալսարանական ասոցիացիայի ստեղծումը 2001-ին

2001թ.-ին Սալամանկայի (Իսպանիա) համաժողովի ժամանակ Եվրոպական համալսարանների ասոցիացիան և Եվրոպական միության ռեկտորների ազգային խորհուրդների կոնֆեդերացիան միավորվեցին՝ Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA) հիմնելու նպատակով: Որպես Եվրոպայում համալսարանական հանրությունը ներկայացնող միակ կազմակերպություն՝ ասոցիացիան Բոլոնիայի գործընթացում ապահովում է համալսարանների վճռորոշ ներկայությունը:

Պրագայի 2001-ի նախարարական գագաթաժողովը

Բոլոնիայի ստորագրյալ 32 երկրների բարձրագույն կրթության նախարարները 2001թ.-ին հանդիպեցին Պրագայում՝ երկամյա պարբերականությամբ հրավիրվող առաջին գագաթաժողովում՝ Բոլոնիայի հռչակագրով սահմանված գործողությունների ուղղություններով առկա առաջընթացը գնահատելու համար: Նախարարները վերահաստատեցին իրենց զորակցությունը

Բոլոնիայի գործընթացին: Նրանք ողջունեցին մի շարք նոր դերակատարների՝ Եվրոպական համալսարանական ասոցիացիայի (EUA), Ուսանողների եվրոպական միության (ESU), Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիայի (EURASHE) և Եվրոպական հանձնաժողովի (ԵՀ) ներգրավումը գործընթացում: Նախարարները համաձայնության եկան՝ Բոլոնիայի հռչակագրում նշված գործողությունների 6 ուղղություններին ավելացնելու ևս 3-ը՝ հարատև կրթության կարևորումը, գործընթացում բուհերի և ուսանողների ներգրավումը և աջակցությունը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչությանը: Գագաթաժողովի հիմնական արդյունքներն ամփոփվեցին Պրագայի կոմյունիկեում:

Բեռլինի 2003-ի նախարարական գագաթաժողովը

Բոլոնիայի երկրորդ նախարարական գագաթաժողովը տեղի ունեցավ 2003թ.-ին Բեռլինում: Նախարարները կոչ արեցին հաջորդ երկու տարում կենտրոնացնել ջանքերը երեք միջանկյալ գերակայությունների վրա. որակի ապահովում/հավաստում, երկաստիճան համակարգ և որակավորումների ու ուսումնառության շրջանների ճանաչում: Նախատեսվեց նաև բարձրագույն կրթության որակավորումների ազգային հենքերի ստեղծումը՝ ուղղորդող Որակավորումների եվրոպական համակապակցող հենքի մշակումը և մինչև 2005թ. բոլոր բուհերում դիպլոմի միասնական հավելվածի ներմուծումը: Նախարարները անհրաժեշտ համարեցին դուրս գալ բարձրագույն կրթության երկու հիմնական աստիճանների շրջանակներից և համաձայնության եկան գործողությունների նոր ուղղության վերաբերյալ՝. դոկտորական մակարդակը ներառելով Բոլոնիայի գործընթացում որպես երրորդ աստիճան՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի միջև փոխկապակցություն ստեղծելու նպատակով: Գագաթաժողովի հիմնական արդյունքներն ամփոփվեցին Բեռլինի կոմյունիկեում:

Բերգենի 2005-ի նախարարական գագաթաժողովը

2005թ.-ի մայիսի 19-20-ը Բոլոնիայի գործընթացի ստորագրյալ երկրների բարձրագույն կրթության նախարարները կրկին հանդիպեցին Բերգենում (Նորվեգիա)՝ առաջընթացը գնահատելու և նոր գերակայություններ սահմանելու համար: Նրանք պայմանավորվեցին, որ 2005÷2007թ.թ. ժամանակաշրջանը պետք է լինի բարեփոխումների գործընթացների իրականացման և ամրապնդման շրջան, և որ գործողությունների նոր ուղղություններ այլևս չեն ներմուծվելու: Նրանք միաժամանակ զեկույցներ ընդունեցին կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի երկու կարևորագույն հենասյուների վերաբերյալ՝

⇒ որակի ապահովման եվրոպական ստանդարտները և ուղենիշները,

⇒ ԵԲԿՏ-ի որակավորումների հենքը:

Որոշվեցին նաև Բոլոնիայի գործընթացի գերակա ոլորտները հաջորդ 2 տարիների համար: Գործունեությունն իրականացվելու էր աշխատանքային

խմբերի, սեմինարների, նախագծերի և քննարկումների միջոցով՝ Բոլոնիայի 2005÷2007թթ. աշխատանքային ծրագրի շրջանակներում: Ծրագիրը նախատեսում էր.

⇒ Որակի ապահովման եվրոպական ստանդարտների և ուղենիշների իրականացում և Որակի ապահովման գործակալությունների եվրոպական ռեգիստրի ստեղծման հնարավորությունների ուսումնասիրություն,

⇒ ԵԲԿՏ որակավորումների համակապակցող հենքի ներդրում և որակավորումների ազգային հենքերի համադրելիության ապահովում,

⇒ միջոցառումների ազգային պլանների մշակում՝ ԵԲԿՏ-ում որակավորումների փոխճանաչումը բարելավելու համար,

⇒ հիմնարար սկզբունքների մշակում դոկտորական մակարդակի որակավորումների համար,

⇒ ջանքերի կենտրոնացում գործընթացի "սոցիալական ուղղվածության" վրա, ներառյալ անձնակազմի և ուսանողների շարժունության, ուսանողների սոցիալական և տնտեսական վիճակի, դրամաշնորհների և վարկերի տեղափոխելիության վերաբերյալ զեկույցների նախապատրաստումը,

⇒ ռազմավարության մշակում Բոլոնիայի գործընթացի "արտաքին չափայնության" համար,

⇒ Բոլոնիայի գործընթացի ապագայի ուրվագծում 2010-ից հետո:

Գագաթաժողովի հիմնական արդյունքներն ամփոփվել են Բերգենի կոմյունիկեում:

Լոնդոնի 2007-ի նախարարական գագաթաժողովը

Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների կրթության նախարարները հինգերորդ անգամ հանդիպեցին Լոնդոնում 2007թ.-ի մայիսի 16-18-ը՝ նպատակ ունենալով գնահատելու գործընթացի առաջընթացը և սահմանելու գերակայություններ հետագա զարգացման համար: Լոնդոնում Բոլոնիայի անդամ երկրների թիվը հասավ 46-ի:

Գագաթաժողովի հիմնական արդյունքներն ամփոփվել են Լոնդոնյան կոմյունիկեում, որը հիմնական գծերով արտացոլում է Բոլոնիայի գործընթացի առաջընթացը նախորդ գագաթաժողովին հաջորդած ժամանակամիջոցում, ձևակերպում գործընթացի գերակա ուղղությունները մինչև 2009թ.-ը և ուրվագծում նրա ապագան մինչև 2010թ.-ը և դրանից հետո: Այստեղ, մասնավորապես, ընդունվել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրի (EQAR) ստեղծման նախագիծը: Այն պետք է անաչառ տեղեկատվություն ապահովի, թե ինչպես են ռեգիստրում գրանցվող որակի ապահովման ազգային գործակալությունները համապատասխանեցնում և ուղղորդում իրենց գործունեությունը Որակի ապահովման եվրոպական ստանդարտներին և ուղենիշներին համապատասխան: Նախարարները կոմյունիկեում ընդգծել են նաև բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության կարևորությունը, պայմանավորվել զեկուցել 2009-ի գագաթաժողովում բարձրագույն կրթության ծրագրերում սոցիալական ներգրավվածութ-

յան ընդլայնման ազգային միջոցառումների մասին: Միաժամանակ, նախարարները կոչ են արել Eurostat և Eurostudent եվրոպական կառույցներին՝ մշակելու համեմատելի և հուսալի ինդիկատորներ՝ ուսանողների և բուհերի աշխատողների շարժունության մեծացման ուղղությամբ առաջընթացը հավաստիորեն չափելու համար:

Լոնդոնում նախարարները հավանություն տվեցին գլոբալ համատեքստում ԵԲԿՏ-ի ռազմավարությանը՝ ընդունելով Բոլոնիայի գլոբալ չափայնության կարևորությունը: Այս կապակցությամբ Բոլոնիայի քարտուղարությունը պետք է ուժեղացնի իր գործունեությունը՝ ԵԲԿՏ-ն արտաքին աշխարհին ավելի լավ ներկայացնելու համար, իսկ Բոլոնիայի անդամ երկրները պետք է բարելավեն արտասահմանյան որակավորումների ճանաչման իրենց ընթացակարգերը:

2007թ.-ի հոկտեմբերին Բոլոնիայի գործադիր խումբն ընդունեց Բոլոնիայի գործընթացի աշխատանքային պլանը մինչև 2009-ի գագաթաժողովն ընկած ժամանակամիջոցի համար: Պլանի նպատակն է գործառնության մեջ դնել Լոնդոնի կոմյունիկեում ձևակերպված խնդիրներն ու երաշխավորությունները՝ ԵԲԿՏ-ի ձևավորման հետագա առաջընթացն իրականացնելու համար: Այն ընդգրկում է բազմաբնույթ գործողություններ, այդ թվում՝ վերլուծական զեկույցների նախապատրաստում ճյուղային աշխատանքային խմբերի կողմից, գնահատումներ, սեմինարներ, խորհրդակցություններ:

Համաձայն Լոնդոնի կոմյունիկեի՝ հաջորդ 2 տարիներին անդամ երկրների ջանքերը կկենտրոնացվեն սահմանված 10 ուղղություններով գործողությունների եզրափակման ուղղությամբ, ներառելով եռաստիճան համակարգի, որակի ապահովման և որակավորումների ու ուսումնառության շրջանների ճանաչման առկա գերակայությունները: Ուշադրությունը, մասնավորապես, պետք է կենտրոնանա՝ ապահովելու գործողությունների հետևյալ ասպարեզները՝

⇒ շարժունությունը,

⇒ սոցիալական ուղղվածությունը,

⇒ տվյալների հավաքումը,

⇒ ծառայունակությունը,

⇒ եվրոպական բարձրագույն կրթությունը՝ գլոբալ դրվածքով,

⇒ Բոլոնիայի նպատակների ամբողջական իրականացման գնահատումը՝ ԵԲԿՏ-ի սոցիալական ուղղվածության, շարժունության, ծառայունակության և փոխճանաչման խնդիրների ընդգրկմամբ:

Սույն ուղեցույցի համապատասխան բաժիններում լրացուցիչ տեղեկություններ են ներկայացվում առանձին ուղղություններով նախատեսվող գործողությունների վերաբերյալ:

Բենիլյուքսի 2009-ի նախարարական գագաթաժողովը

Բոլոնիայի նախարարական հաջորդ գագաթաժողովը տեղի կունենա 2009թ.-ի ապրիլի 28÷29-ին Լեովենի և Լուվեյն-Լա-Նեովի համալսարաննե-

ում (Բենիլյուքսի երկրներ): Գագաթաժողովի տեղի ընտրությունը խորհրդանշական իմաստ ունի: Կազմակերպիչները ցանկանում են ընդգծված կերպով տեսանելի դարձնել այն էական դերը, որն ունի բարձրագույն կրթական համայնքը Բոլոնիայի նպատակների իրագործման մեջ:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

2003-ի Բեռլինի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.bologna-berlin2003.de/

2005-ի Բերգենի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.bologna-bergen2005.no/

2007-ի Լոնդոնի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.dfes.gov.uk/londonbologna/

2009-ի Բենիլյուքսի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA):
http://www.eua.be/index.php

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA):
http://www.enqa.eu/

Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE):
http://www.eurashe.eu/RunScript.asp?p=ASP/Pg0.asp

Ուսանողների եվրոպական միություն (ESU): http://www.esib.org/

Որոշումների ընդունումը Բոլոնիայի գործընթացում

Միջպետական գործընթաց

Բոլոնիայի գործընթացում որոշումների ընդունման “միջպետական գործընթացն” իրականացվում է մասնակից երկրների նախարարների միջոցով՝ երկամյա պարբերականությամբ հրավիրվող գագաթաժողովներում: Այն չի կառավարվում Եվրահանձնաժողովի կողմից, քանի որ կրթության ոլորտի համար պատասխանատվությունն ընկնում է Եվրամիության անդամ պետությունների վրա: Որոշումներն ընդունվում են ներգրավված 46 մասնակից երկրների բարձրագույն կրթության նախարարների համահամաձայնությամբ: Նման մոտեցումը հաշվի է առնում Եվրոպայի բարձրագույն կրթության համակարգերի բազմազանությունը և բարձրագույն կրթության համար ազգային պատասխանատվության իրողությունը:

Նախարարական գագաթաժողովները

Որոշումների կայացման գործընթացում ամենակարևոր իրադարձությունը երկու տարին մեկ անցկացվող Բոլոնիայի գործընթացի ընթացիկ գնահատումն է, երբ մասնակից բոլոր երկրների բարձրագույն կրթության նախարարները հանդիպում են առաջընթացը գնահատելու և մոտակա ապագայում գործընթացն ուղղորդելու համար: Ինչպես արդեն ասվեց, հաջորդ նախարարական գագաթաժողովը տեղի կունենա 2009թ. ապրիլի 28÷29-ին Բենիլյուքսի երկրներում, հաջորդելով 2001-ին Պրագայում, 2003-ին Բեռլինում, 2005-ին Բերգենում և 2007-ին Լոնդոնում կայացած հանդիպումներին: Յուրաքանչյուր գագաթաժողով ավարտվում է փոխհամաձայնեցված կոմյունիկեով, որն ընդգրկում է երաշխավորություններ և գերակայություններ հաջորդ 2 տարիների համար: Նախարարական գագաթաժողովներին գործուն աջակցություն են ցուցաբերում երկու կառույցներ՝ Բոլոնիայի գործադիր խումբը և Բոլոնիայի խորհուրդը: Դրանց կազմակերպում և ղեկավարում է Բոլոնիայի քարտուղարությունը: Ներկայումս Բենիլյուքսի երկրներն են կատարում քարտուղարության գործառույթները՝ որպես հաջորդ՝ 2009-ի նախարարական գագաթաժողովի հյուրընկալող կողմ:

Բոլոնիայի գործադիր խումբը

Բոլոնիայի գործադիր խումբը (BFUG) բաղկացած է Բոլոնայի բոլոր 46 մասնակից երկրների իրավասու նախարարությունների ներկայացուցիչներից և այլ համաեվրոպական կազմակերպությունների ներկայացուցիչներից, ներառյալ՝ Եվրահանձնաժողովը, Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA), Ուսանողների եվրոպական միությունը (ESU), Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA), Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE) և Եվրոպայի խորհուրդը: Սկսած 2005-ի Բերգենի գագաթաժողովից՝ Միջազգային կրթության համաեվրոպական կառույցը և Արդյունաբե-

ողների և գործատուների կոնֆեդերացիաների միությունը նույնպես մասնակցում են Բոլոնիայի գործադիր խմբի աշխատանքներին: Խմբի դերը նախարարական գագաթաժողովներում արված երաշխավորությունների իրականացման գործընթացին հետևելն է: Խումբը կազմում է միջոցառումների, նախագծերի աշխատանքային ծրագիրը և պլանավորում աշխատանքային խմբերի գործողությունները Բոլոնիայի գործընթացի առանձին ասպեկտների ուղղությամբ: Երկրները նույնպես ազատ են՝ նախաձեռնելու և իրականացնելու իրենց սեփական գործողությունները՝ նախարարական կոմյունիկեներին համապատասխան:

Բոլոնիայի խորհուրդը

Բոլոնիայի խորհուրդը նախագահում է Եվրամիությունն այդ պահին նախագահող երկիրը, իսկ փոխնախագահն է առաջիկա նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկրի ներկայացուցիչը: Խմբում ներկայացված են Եվրամիության նախորդ և հաջորդ նախագահող երկրները և ևս երեք մասնակից երկրներ, որոնք ընտրվում են Բոլոնիայի գործադիր խմբի կողմից մեկ տարի ժամկետով: Բոլոնիայի խորհուրդն աջակցում է Բոլոնիայի գործադիր խմբին Բոլոնիայի աշխատանքային ծրագրի իրականացման և մոնիթորինգի հարցերում:

Եվրահանձնաժողովի դերը

Բոլոնիայի գործընթացի ստորագրյալ երկրների ցանկը ընդլայնվել է մինչև 46-ը՝ դուրս գալով Եվրամիության (ԵՄ) պաշտոնական աշխարհագրական սահմաններից: Այս իմաստով Բոլոնիայի գործընթացն ընթանում է նաև ԵՄ շրջանակներից դուրս: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ ստորագրյալ երկրների մեծամասնությունը (27 երկիր) ԵՄ անդամ պետություններ են: Հանձնաժողովի գործունեությունը կրթության ոլորտում իրականացվում է ԵՄ Պայմանագրի 149-րդ հոդվածի համաձայն, որը լիազորում է Եվրահամայնքին՝ “աջակցել որակյալ կրթության զարգացմանը՝ քաջալերելով համագործակցությունը անդամ պետությունների միջև”: Հանձնաժողովը Բոլոնիայի գործընթացի դերը կարևորում է նաև ԵՄ-ի, այսպես կոչված, Լիսաբոնյան ստրատեգիայի խնդիրների (մասնավորապես, ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծում) կապակցությամբ: ԵՄ-ի նախաձեռնությունները միջին մասնագիտական և արհեստագործական կրթության բնագավառում եվրոպական համագործակցության ուղղությամբ, այսպես կոչված, Բրյուգես-Կոպենհագենի գործընթացի միջոցով, ընթանում են Բոլոնիայի գործընթացին զուգահեռ:

Բոլոնիայի գործընթացում Եվրահանձնաժողովին հատկացվել է հատուկ կարգավիճակ՝ որպես Բոլոնիայի գործադիր խմբի և Բոլոնիայի խորհրդի լիիրավ անդամի: Այդ կարգավիճակը և Եվրահանձնաժողովի՝ որպես Բոլոնիայի նախագծերի ֆինանսավորման աղբյուրի դերը ապահովում են Հանձնաժողովի զգալի ազդեցությունը Բոլոնիայի գործընթացում:

Այլ կազմակերպություններ

Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA), Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASE), Ուսանողների եվրոպական միությունը (ESU) և Եվրոպայի խորհուրդը հանդիսանում են և՛ Բոլոնիայի գործադիր խմբի, և՛ Բոլոնիայի խորհրդի խորհրդակցական անդամներ: Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (UNESCO) Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոնը (UNESCO-CEPES) նույնպես Բոլոնիայի գործադիր խմբի խորհրդակցական անդամ է: Այս հանգամանքը վերոհիշյալ կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում ակտիվ դերակատարություն ունենալու Բոլոնիայի գործընթացում որոշումների ընդունման մեջ:

2005-ի Բերգենի գագաթաժողովում Միջազգային կրթության համաեվրոպական կառույցը (ներկայացնում է ուսուցիչների և կրթության ոլորտի աշխատողների միությունները Եվրոպայում) և Եվրոպայի Արդյունաբերողների և գործատուների կոնֆեդերացիաների միությունը դարձան Բոլոնիայի գործադիր խմբի խորհրդակցական անդամներ: Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) նույնպես դարձել է խմբի նոր խորհրդակցական անդամ և սերտորեն համագործակցում է EUA-ի, EURASE-ի և ESU-ի հետ որակի ապահովման/հավաստման հարցերում: Այս 4 կազմակերպությունները միասին Բոլոնիայի գործընթացում հայտնի են որպես “E4 խումբ”:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Եվրահանձնաժողով: http://ec.europa.eu/education/index_en.html

Եվրոպայի խորհուրդ:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/pcao/Council_of_Europe.htm

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA):
http://www.eua.be/index.php

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA):
http://www.enqa.eu/

Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE):
http://www.eurashe.eu/RunScript.asp?p=ASP/Pg0.asp

Ուսանողների եվրոպական միություն (ESU): http://www.esib.org/

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոն (UNESCO-CEPES):
http://www.cepes.ro/

Միջազգային կրթության համաեվրոպական կառույց:
http://www.ei-ie.org/en/index.php

Արդյունաբերողների և գործատուների կոնֆեդերացիաների միութ-յուն (BUSINESSEUROPE):
http://www.businesseurope.eu/Content/Default.asp?PageID=455

Հիմնական դերակատարները Հայաստանում

ՀՀ կառավարությունը

ՀՀ կառավարության հիմնական դերը Բոլոնիայի գործընթացում բարձրագույն կրթության ռեֆորմների ռազմավարությանը համապատասխան ուղղորդման և օրենսդրական փոփոխությունների ու լրացումների նախաձեռնումն է՝ ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ԵԲԿՏ հիմնարար սկզբունքներին համադրելի դարձնելու նպատակով:

Որպես կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է իրականացնում պետական քաղաքականությունը բարձրագույն կրթության ոլորտում՝ համակարգելով նաև Բոլոնիայի գործընթացով պայմանավորված բարձրագույն և հետբուհական կրթության բարեփոխումների ընթացքը Հայաստանում: 1995թ.-ի մայիսից Հայաստանը Բոլոնիայի գործընթացի անդամ երկիր է, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարը մասնակցում է Բոլոնիայի նախարարական գագաթաժողովներին լիիրավ անդամի կարգավիճակով: Բոլոնիայի գործընթացի առանձին ուղղություններով աշխատանքների համակարգումը ՀՀ բուհերում նախարարությունն իրականացնում է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին[1] համապատասխան: Նախարարությունն իր ներկայացուցիչն ունի Բոլոնիայի գործադիր խմբում:

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ArmEnic)

ArmEnic-ը հայաստանյան և միջազգային որակավորումների համեմատման և ճանաչման վերաբերյալ տեղեկատվություն, խորհրդատվություն տրամադրող և պաշտոնական եզրակացություններ ընդունող իրավասու մարմին է: Արտասահմանյան որակավորումների ճանաչման վերաբերյալ որոշումներն ընդունվում են որակավորումների գնահատման հիման վրա՝ կիրառելով ENIC-NARIC ցանցերի կողմից մշակված չափանիշները և ընթացակարգերը: Կենտրոնը կրթական համակարգերի և որակավորումների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում բուհերին, մասնագիտական մարմիններին (ասոցիացիաներ, միություններ), գործատուներին և անհատներին: Կենտրոնը ներկայացնում է Հայաստանը ազգային տեղեկատվական կենտրոնների միջազգային ENIC-NARIC ցանցում:

Կենտրոնը մշակել է եվրոպական դիպլոմի հավելվածի հայկական ձևաթերթը, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Կենտրոնի գործադիր տնօրենը Հայաստանի 2 ներկայացուցիչներից մեկն է Բոլոնիայի գործադիր խմբում՝ ղեկավարելով նաև ակադեմիական շարժունության աշխատանքային խումբը:

[1] ՀՀ կառավարության որոշում, 2 նոյեմբերի 2006թ.:

TEMPUS-ի ազգային գրասենյակը Հայաստանում

TEMPUS-ի հայաստանյան գրասենյակը կոորդինացնում է TEMPUS ծրագրի աշխատանքները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, բուհերին և ուսանողներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելով Եվրամիության կրթական և վարժանքային ծրագրերի վերաբերյալ: Գրասենյակն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Բոլոնիայի գործընթացին նվիրված բոլոր քննարկումներին, նախագծերին և միջոցառումներին:

2007-ից Գրասենյակը ստանձնել է նաև Բոլոնիայի փորձագետների ազգային թիմի ստեղծման և նրա աշխատանքների համակարգման պարտականությունը: Փորձագետները բուհերին և ուսանողներին խորհրդատվություն և աջակցություն են տրամադրելու Բոլոնիայի գործընթացի և ընթացող ռեֆորմների, հատկապես՝ ակադեմիական շարժունության, որակավորումների ճանաչման, կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի և դիպլոմի հավելվածի վերաբերյալ:

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստանը

Հիմնադրամը զգալի օժանդակություն է ցուցաբերում Հայաստանում ընթացող բարձրագույն կրթության ռեֆորմներին՝ տարբեր դրամաշնորհային ծրագրերի նախաձեռնման, ամառային դպրոցների կազմակերպման և ցանցային ծրագրերի իրականացման միջոցով: Մասնավորապես, մեծ է հիմնադրամի դերը ՀՀ բուհական համակարգում կրեդիտային համակարգի ներդրման, որակի ապահովման ներբուհական համակարգերի ստեղծման, որակի ապահովման ազգային համակարգի և դոկտորական ծրագրերի հայեցակարգային հիմնադրույթների մշակման, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացը և նրա հայաստանյան անդրադարձը լուսաբանելու հարցերում:

Կրթության ազգային ինստիտուտը

Ինստիտուտն այս ասպարեզում կատարում է ՀՀ բարձրագույն կրթության ռեֆորմները լուսաբանող տեղեկատվական նյութերի, ոլորտին առնչվող օրենսդրական, ենթաօրենսդրական և այլ կարգավորող փաստաթղթերի, համապատասխան ուսումնասիրությունների արդյունքների, խորհրդաժողովների և սեմինարների նյութերի հրատարակման աշխատանքներ՝ աջակցելով Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ընթացող բարեփոխումների տեղեկատվական/մեթոդական ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

ՀՀ կառավարություն: http://www.gov.am/armversion/index.html

ՀՀ կրթության և գիտության նախարարություն: http://www.edu.am/

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան: http://www.osi.am/

TEMPUS-ի ազգային գրասենյակը Հայաստանում: http://www.tempus.am/

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ArmEnic): http://www.armenic.am/

Հիմնական դերակատարները եվրոպական մակարդակում

Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA)

Ասոցիացիան Բոլոնիայի գործադիր խմբի և Բոլոնիայի խորհրդի խորհրդակցական անդամ է և ղեկավարում է Բոլոնիայի գործընթացին առնչվող մի շարք նախագծեր, օրինակ, Trends զեկույցների կազմումը, որակի ապահովման և դոկտորական ծրագրերի հիմնահարցերի վերաբերյալ ուսումնասիրությունները: Ինչպես արդեն նշվել է, այն հանդիսանում է Եվրոպական համալսարանների ասոցիացիայի և ԵՄ ռեկտորների ազգային խորհուրդների կոնֆեդերացիայի ներկայացուցչական կազմակերպությունը: EUA-ն ունի 775 անդամներ Եվրոպայի 45 երկրներում:

Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE)

Ասոցիացիան Բոլոնիայի գործադիր խմբի և Բոլոնիայի խորհրդի խորհրդակցական անդամ է: Այն եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցչական կազմակերպությունն է:

Ուսանողների եվրոպական միությունը (ESU)

Միությունը Բոլոնիայի գործադիր խմբի և Բոլոնիայի խորհրդի խորհրդակցական անդամ է: Այն Եվրոպայի 36 երկրների 49 ազգային ուսանողական միությունների ներկայացուցչական կազմակերպությունն է:

Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ)

Եվրահանձնաժողովը Բոլոնիայի գործադիր խմբի և խորհրդի լիիրավ անդամ է և օժանդակում է Բոլոնիայի գործընթացին՝ որոշումների ընդունմանը մասնակցության, մի շարք նախագծերի ֆինանսավորման և գործընթացի խնդիրներին առնչվող առաջարկների մշակման միջոցով: Հանձնաժողովին է պատկանում, օրինակ, հարատև կրթության որակավորումների եվրոպական հենքի առաջարկը:

Եվրոպայի խորհուրդը (ԵԽ)

Եվրախորհուրդը Բոլոնիայի գործադիր խմբի և խորհրդի խորհրդակցական անդամ է: Այն կարևոր օժանդակություն է ցուցաբերում Բոլոնիայի գործընթացին, մասնավորապես, ԵԽ/ՅՈՒՆԵՍԿՕ-ի որակավորումների ճանաչման

Լիսաբոնյան կոնվենցիայի նախաձեռնությամբ: Այն հնարավորություն է տրամադրում՝ նախարարությունների և բուհական հանրույթի ներկայացուցիչների միջև քննարկումների համար և աջակցում Բոլոնիայի գործընթացի նորանդամ երկրներին:

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA)

Ասոցիացիայի անդամներն այսօր պետական մարմիններ են, բուհական ասոցիացիաներ և որակի ապահովման ազգային գործակալություններ: Այն Բոլոնիայի գործադիր խմբի խորհրդակցական անդամ է, նրա գործունեությունը ներառում է միջոցառումների կազմակերպում, նյութերի հրատարակում, հետազոտություններ և նախագծերի մշակում՝ որակի ապահովման հիմնախնդիրների վերաբերյալ:

ENIC-NARIC ցանցը

Ցանցը միավորում է որակավորումների ճանաչման ազգային տեղեկատվական կենտրոնները ԵՄ անդամ երկրներում (NARIC) և ոչ անդամ եվրոպական երկրներում (ENIC): Ցանցը հնարավորություն է ստեղծում որակավորումների ճանաչման հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար: Այն ԵՄ Սոկրատես-Էրազմուս ծրագրի մասն է կազմում, որն աջակցում է բուհերի միջև ուսանողների և աշխատակազմի շարժունությանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոնը (UNESCO-CEPES)

Կենտրոնը խթանում է բարձրագույն կրթության բնագավառում համագործակցությունը Եվրոպայում, հատկապես կենտրոնացնելով իր ուշադրությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ուղղությամբ: Այն Բոլոնիայի գործադիր խմբի խորհրդակցական անդամ է:

Բոլոնիայի քարտուղարությունը

Բոլոնիայի յուրաքանչյուր հաջորդ նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկիրը (ներկայումս՝ Բենիլյուքսի երկրները) ապահովում է Բոլոնիայի գործընթացի քարտուղարության գործառույթները: Քարտուղարությունը կրում է վարչական և գործառական պատասխանատվություն հաջորդ նախարարական գագաթաժողովի նախապատրաստման և կազմակերպման համար: Այն քարտուղարության գործառույթներ է կատարում

Բոլոնիայի գործադիր խմբի և Բոլոնիայի խորհրդի համար: Բոլոնիայի գործընթացի Բենիլյուքսի քարտուղարության կայքէջը կարելի է գտնել հետևյալ հասցեում՝ http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Եվրահանձնաժողով: http://ec.europa.eu/education/index_en.html

Եվրոպայի խորհուրդ:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/pcao/Council_of_Europe.htm

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA):
http://www.eua.be/index.php

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA):
http://www.enqa.eu/

Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE):
http://www.eurashe.eu/RunScript.asp?p=ASP/Pg0.asp

Ուսանողների եվրոպական միություն (ESU): http://www.esib.org/

ENIC-NARIC ցանցեր: http://www.enic-naric.net/

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոն (UNESCO-CEPES):
http://www.cepes.ro/

2009-ի Բենիլյուքսի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/

Բոլոնիայի գործընթացի մասնակիցները

Անդամ երկրները

Ադրբեջան
Ալբանիա
Անդորրա
Ավստրիա
Բելգիա
Բոսնիա և Հերցոգովինա
Բուլղարիա
Գերմանիա
Դանիա
Էստոնիա
Թուրքիա
Իռլանդիա
Իսլանդիա
Իսպանիա
Իտալիա
Լատվիա
Լեհաստան
Լիխտենշտեյն
Լիտվա
Լյուքսեմբուրգ
Խորվաթիա
Կիպրոս
Հայաստան
Հունաստան
Հունգարիա
Մալթա
Մեծ Բրիտանիա
Մոլդովա
Մոնտենեգրո
Նիդեռլանդներ
ՆՀՀ Մակեդոնիա
Նորվեգիա
Շվեդիա
Շվեյցարիա
Ուկրաինա
Չեխիայի Հանրապետություն
Պորտուգալիա
Ռումինիա
Ռուսաստանի Դաշնություն
Սերբիա
Սլովակիայի Հանրապետություն
Սլովենիա
Վատիկան
Վրաստան
Ֆինլանդիա
Ֆրանսիա

Լրացուցիչ լիիրավ անդամ

Եվրոպական հանձնաժողով

Խորհրդակցական անդամներ

Եվրոպայի խորհուրդ

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA)

Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE)

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA)

Ուսանողների եվրոպական միություն (ESU)

UNESCO-CEPES

Միջազգային կրթության համաեվրոպական կառույց

Արդյունաբերողների և գործատուների կոնֆեդերացիաների միություն (BUSINESSEUROPE)

Անդամության թեկնածուները

Իսրայել
Կոսովո
Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն
Ղրղզստանի Հանրապետություն

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրները և կազմակերպությունները:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/pcao/

Գործողությունների 1-ին ուղղություն
Դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Բարձրագույն կրթության դյուրընթեռնելի և համադրելի որակավորումների հաստատումը ողջ Եվրոպայում փոխկապակցում է Բոլոնիայի գործընթացի մի շարք այլ ուղղություններ: Նման որակավորումները, որոնք կարող են հեշտությամբ ընկալվել, "թարգմանվել" և համեմատվել Եվրոպայում ամենուր, ապահովում են բարձրագույն կրթության համակարգերի թափանցիկությունն ու ճկունությունը, իսկ ուսանողների և շրջանավարտների համար ստեղծվում է իրենց ստացած որակավորումների ավելի լայն ճանաչման հնարավորություն: Սա նպաստում է նաև շարժունության ազատությանը ավելի թափանցիկ դարձող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ): Մյուս կողմից, եվրոպական որակավորումների դյուրընթեռնելիությունն ու համադրելիությունը նպաստում են եվրոպական բարձրագույն կրթության գրավչության և մրցունակության բարձրացմանը արտաքին աշխարհում:

Գործողությունների այս ուղղության իրականացման համար Բոլոնիայի գործընթացում էական դեր է հատկացվում Եվրոպական դիպլոմի հավելվածին: Դեռևս 2003թ.-ին Բեռլինի նախարարական գագաթաժողովն անդամ երկրներին կոչ արեց, որ "յուրաքանչյուր շրջանավարտ, սկսած 2005թ.-ից, անվճար և ավտոմատ կերպով ստանա Դիպլոմի հավելվածը": Դիպլոմի հավելվածը որակավորումների ընթեռնելիության և համադրելիության ապահովման կարևոր գործիք է, որն այսօր լայնորեն օգտագործվում է Բոլոնիայի անդամ երկրներում և նպատակ ունի նկարագրելու ստացած որակավորումը միասնական ձևաթերթով, որը պետք է հեշտհասկանալի և համեմատելի լինի՝ անկախ նրանից, թե որտեղ է որակավորումը շնորհվել: Հավելվածը նկարագրում է որակավորման, այսինքն՝ նրա հիմքում ընկած կրթական ծրագրի բովանդակությունը և բարձրագույն կրթության այն համակարգի կառուցվածքը, որի շրջանակներում որակավորումը շնորհվել է: Մյուս կողմից, այն ուսումնական պլան կամ ակադեմիական տեղեկագիր չէ և գործում է ընդամենը որպես որակավորման փաստաթղթի լրացուցիչ բացատրագիր՝ նպատակ չունենալով փոխարինելու փաստաթուղթը: Եվրոպական հանձնաժողովը հրապարակել է Europass-ի "Դիպլոմի հավելված" էլեկտրոնային փաստաթուղթը, որը միասնական հենք է ապահովում Եվրոպայում որակավորումների և կրթական ծրագրերի ելքային կրթական արդյունքների ճանաչման համար՝ ընդգրկելով ինչպես Եվրոպական դիպլոմի հավելվածը, այնպես էլ թափանցիկության այլ հայտնի գործիքներ (Europass: CV, Լեզվի վկայագիր, Հավաստագրի հավելված, Շարժունություն): Եվրոպական հանձնաժողովը "Դիպլոմի հավելվածի որականիշ" է շնորհում այն բուհերին, որոնք այն կիրառում են պատշաճորեն:

Բոլոնիայի գործընթացը պահանջում է, որ բոլոր անդամ երկրները ստորագրեն և վավերացնեն Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման կոնվենցիան: Այն ձևակերպվել է Եվրոպայի խորհրդի կողմից Լիսաբոնում և սովորաբար վկայակոչվում է որպես

“Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիա”: Համաձայնագիրն ամրագրում է, որ որևէ խտրականություն չպետք է լինի որակավորումների կրողների նկատմամբ՝ Համաձայնագիրը ստորագրած բոլոր երկրներում, իսկ մուտքը բարձրագույն կրթության հաջորդ աստիճան և նախորդող ակադեմիական որակավորման օգտագործումը պետք է իրականացվեն այն երկրի քաղաքացիների հետ հավասար պայմաններով, որտեղ հայցվում է որակավորման ճանաչումը:

Որակավորումների դյուրընթեռնելիությանը և համադրելիությանը նպաստող կարևոր գործիք են նաև Բոլոնիայի անդամ երկրների բարձրագույն կրթության որակավորումների ազգային հենքերը, որոնք ուղղված են ԵԲԿՏ թափանցիկության և մրցունակության մեծացմանը: Եթե 2003թ.-ին Բեռլինում կրթության նախարարներն առաջին անգամ առաջադրեցին որակավորումների ազգային հենքերի և ԵԲԿՏ համակապակցող շրջանակային հենքի ստեղծման խնդիրները, ապա 2005թ.-ին Բերգենի գագաթաժողովում արդեն ընդունվեց ԵԲԿՏ որակավորումների համակապակցող հենքի նախագիծը, որը հիմք պետք է ծառայեր ազգային հենքերի փոխհամաձայնեցման և համատեղելիության համար:

ԵԲԿՏ որակավորումների համակապակցող հենքն ունի հետևյալ բնութագրական հատկանիշները՝

⇒ բարձրագույն կրթության երեք աստիճանների առկայություն (բակալավրի, մագիստրոսի և դոկտորի)՝ ներառյալ նաև միջանկյալ որակավորումների հնարավորությունը ազգային հենքերի շրջանակներում,

⇒ որակավորումների ընդհանուր բնութագրիչներ յուրաքանչյուր աստիճանի համար, որոնք հայտնի են որպես “Դուբլինյան բնութագրիչներ” և կառուցվում են ելքային կրթական արդյունքների հիման վրա,

⇒ տիպային կրեդիտային միջակայքեր առաջին (180÷240 ECTS կրեդիտներ) և երկրորդ (60÷120 ECTS կրեդիտներ) աստիճանների համար: Երրորդ աստիճանի համար նման միջակայք դեռ չի ներմուծվել:

Բերգենում նախարարներն առաջարկեցին անդամ երկրներին ապահովել որակավորումների ազգային հենքերի համատեղելիությունը ԵԲԿՏ համակապակցող հենքին և մինչև 2010թ.-ն իրականացնել համատեղելիության ինքնահավաստագրման գործընթաց՝ առաջնորդվելով համատեղելիության գնահատման Բոլոնիայի գործադիր խմբի կողմից ներկայացված չափանիշներով:

Եվրահանձնաժողովը 2006թ.-ին առաջարկություն ընդունեց ստեղծել որակավորումների եվրոպական հենք նաև հարատև կրթության համար: Համաձայն առաջարկության՝ նորաստեղծ հենքը պետք է ունենար 8 մակարդակ՝ տարածվելով բոլոր որակավորումների վրա՝ սկսած միջնակարգ կրթությունից: Այս առաջարկության հիման վրա ստեղծվեց Հենքի նախագիծը[1], որը 2008թ.-ի հունվարին երաշխավորվեց Եվրախորհրդարանի և Եվրախորհրդի կողմից համաեվրոպական ներդրման համար:

[1] Recommendation of the European Parliament and of the Council “on the establishment of the European Qualifications Framework for lifelong learning”. PE-CONS 3662/07, Brussels, 29 January 2008. 20 pages.

Վերջին զարգացումները

2007թ.-ին Լոնդոնի գագաթաժողովում վերահաստատվեց որակավորումների հենքերի կարևորությունը ԵԲԿՏ-ում համադրելիության և թափանցիկության ձեռքբերման գործում: Ընդգծվեց հատկապես դրանց էական, նպաստող դերը՝ ելքային կրթական արդյունքների և կրեդիտների հիման վրա կրթական ծրագրերի և դրանց մոդուլների կառուցման, ինչպես նաև որակավորումների և նախորդող ուսումնառության արդյունքների փոխճանաչումը բարելավելու տեսանկյունից: Նշելով որոշակի առաջընթացը Բերգենից հետո որակավորումների ազգային հենքերի ստեղծման ուղղությամբ՝ Լոնդոնյան կոմյունիկեն արձանագրեց նախարարների հաստատակամությունը՝ ապահովելու այս գործընթացի լիարժեք ավարտը մինչև 2010թ.՝ ակնկալելով Եվրախորհրդի աջակցությունը որակավորումների ազգային հենքերի ստեղծման և ԵԲԿՏ համակապակցող հենքին դրանց համատեղելիության հավաստագրման ուղղությամբ երկրների միջև փորձի փոխանակմանը:

Այս խնդիրն իր արտացոլումն է ստացել Բոլոնիայի 2007÷2009թ.թ. աշխատանքային ծրագրում: Ազգային հենքերի ստեղծման հիմնական աշխատանքները պետք է կատարվեն Բոլոնիայի անդամ երկրներում՝ Եվրախորհրդի համակողմանի աջակցությամբ, որն իրականացվելու է մի շարք եվրոպական և տարածաշրջանային խորհրդակցությունների, փորձագիտական օգնության և հրատարակությունների միջոցով: Ստեղծվել է համակարգող խումբ՝ համապատասխան երաշխավորությունների մշակման և որակավորումների հենքերի հիմնահարցերի վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու համար: Հատուկ ուշադրության առարկա պետք է հանդիսանա ECTS-ի ներմուծումը որակավորումների հենքերում:

Լոնդոնյան կոմյունիկեն անդրադարձել է նաև որակավորումների ճանաչման հարցին՝ արձանագրելով երկամյա ժամանակամիջոցում ձեռք բերված առաջընթացը Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիայի, ECTS-ի ու դիպլոմի հավելվածների իրականացման ասպարեզում և միաժամանակ նշելով որակավորումների ճանաչման վերաբերյալ ազգային և ինստիտուցիոնալ մոտեցումների լայն սպեկտրի ներդաշնակեցման անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ Բոլոնիայի գործադիր խմբին հանձնարարվել է ENIC/NARIC ցանցերի միջոցով ապահովել միջոցառումների ազգային պլանների վերլուծությունը և լավագույն փորձի տարածումը: Որակավորումների ճանաչման ազգային պլանների իրականացումը և փորձի փոխանակումն այս ուղղությամբ պետք է լինեն ENIC/NARIC ցանցերի ազգային տեղեկատվական կենտրոնների, ինչպես նաև փոխճանաչմանն առնչվող այլ կառույցների (բուհեր, նախարարություններ և այլն) ուշադրության կենտրոնում: Կարևորվում է համեմատվող որակավորումների “էական տարբերությունների” շեմային չափանիշների միասնականացումը, ինչը պետք է ընդհանուր հիմք ստեղծի՝ Բոլոնիայի անդամ երկրներում որակավորումների չճանաչելը հիմնավորելու համար: Ազգային պլանների վերլուծության ամփոփիչ զեկույցը Բոլոնիայի գործադիր խմբին պետք է ներկայացվի 2008թ.-ի վերջին:

Հայաստանի արձագանքը

2004թ.-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Լիսաբոնյան կոնվենցիան, և այսօր Հայաստանը մեկն է Բոլոնիայի անդամ այն 46 երկրներից,

որոնք պաշտոնապես միացել են այդ կոնվենցիային: 2005թ. մայիսին ՀՀ կառավարության որոշմամբ հիմնվել է արտասահմանյան որակավորումների և դիպլոմների փոխճանաչման ազգային տեղեկատվական կենտրոնը (ArmENIC), որի միջոցով ապահովվում է նաև Հայաստանի մասնակցությունը որակավորումների փոխճանաչման ENIC/NARIC եվրոպական ցանցերին:

Եվրոպական նախատիպի հիման վրա ArmENIC կենտրոնի կողմից մշակվել և ՀՀ կառավարության որոշմամբ (նոյեմբեր, 2007թ.) հաստատվել է Դիպլոմի հավելվածի հայաստանյան նմուշը: Համաձայն Բոլոնիայի սկզբունքների իրագործման հաստատված ժամանակացույցի[2]՝ Դիպլոմի հավելվածը պաշտոնապես գործառության մեջ կմտնի և ՀՀ բուհերի շրջանավարտներին կհանձնվի՝ սկսած 2007/08 ուս. տարվանից: Ենթադրվում է, որ այն կփոխարինի ՀՀ բուհերի շրջանավարտներին մինչ այժմ տրվող դիպլոմի ներդիրը՝ ներառելով նաև վերջինիս առկա բովանդակությունը: Որպեսզի ՀՀ բուհերը պատշաճ կերպով կիրառեն Դիպլոմի հավելվածը և կարողանան հավակնել Եվրոպական հանձնաժողովի Դիպլոմի հավելվածի որականիշի շնորհմանը, անհրաժեշտ է ստեղծել Դիպլոմի հավելվածի հայալեզու ուղեցույց, ապահովելով նաև անհրաժեշտ խորհրդատվական աջակցություն ՀՀ բուհերին:

ՀՀ ԿԳ նախարարի հրամանով (նոյեմբեր, 2006թ.) ստեղծվել է ԵԲԿՏ որակավորումների հենքին համադրելի ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների համակարգի մշակման աշխատանքային խումբ, որը, համաձայն ժամանակացույցի[3], մինչև 2009թ.-ը պետք է ավարտի հենքի մշակման, ներդրման և ինքնահավաստագրման աշխատանքները: Հարկ է նշել, որ այս վերջնաժամկետը սահմանված է Բերգենի և Լոնդոնի կոմյունիկեների պահանջներին համապատասխան: Հենքի նախագծի շրջանակներում կմշակվեն որակավորումների ընդհանուր և մասնագիտական բնութագրիչներ՝ բարձրագույն կրթության բոլոր աստիճանների և բոլոր մասնագիտական ուղղությունների համար: ԿԳ նախարարության կողմից հրատարակված "Բոլոնիայի գործընթացով դեպի ԵԲԿՏ" վերլուծական զեկույցը[4] պարունակում է որոշակի մեթոդական երաշխավորություններ և տիպարային օրինակ՝ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների հենքի մշակման համար:

---

[2] ՀՀ կառավարության թիվ 43-Ն որոշումը "ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին" (ընդունված 02.11.2006թ.)

[3] Նույնը

[4] Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: ԲԿՈՀԱԿ, Վերլուծական զեկույց: ՀՀ ԿԳՆ-ԿԱԻ, Տեղեկագիր՝ Բարձրագույն կրթություն: Երևան, 2007: էջ 186-397:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիա:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/QF-EHEA-May2005.pdf

ԵԲԿՏ որակավորումների հենքը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/Framework_qualificationsforEHEA-May2005.pdf

Հարատև կրթության որակավորումների եվրոպական հենքի առաջարկը:
http://ec.europa.eu/education/policies/educ/eqf/rec08_pt.pdf

Դուբլինյան բնութագրիչներ:
http://www.uni-due.de/imperia/md/content/bologna/dublin_descriptors.pdf

Բոլոնիայի սեմինար՝ "Կրթական արդյունքների հենքով բարձրագույն կրթություն" (2008թ.):
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/BolognaSeminars/Edinburgh2008.htm

Բարձրագույն կրթության ֆորումը որակավորումների հենքերի վերաբերյալ(2007թ.):
http://www.coe.int/t/dg4/highereducation/QF/

"Որակավորումների ազգային հենքերի մշակումը և հավաստագրումը" զեկույցը (2007թ.):
http://www.dfes.gov.uk/londonbologna/uploads/documents/WGQF-report-final2.pdf

Եվրահանձնաժողովի դիպլոմի հավելվածի ուղեցույց և դիպլոմի հավելվածի որականիշ:
http://ec.europa.eu/education/policies/rec_qual/recognition/diploma_en.html

Europass: http://europass.cedefop.europa.eu/europass/preview.action

Գործողությունների 2-րդ ուղղություն
Հիմնականում երեք աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Բոլոնիայի հռչակագիրն ի սկզբանե ենթադրում էր բարձրագույն կրթության 2 աստիճանների վրա հիմնված համակարգ: 2003թ.-ին Բեռլինի գագաթաժողովում նախարարներն առաջարկեցին ընդգրկել դոկտորական ծրագրերը (որակավորումները) Բոլոնիայի գործընթացում՝ որպես երրորդ աստիճան, և այդուհետ Բոլոնիայի գործընթացը ներառում է բարձրագույն կրթության 3 աստիճաններ: Բոլոնիայի հռչակագիրն ի սկզբանե սահմանում էր առաջին աստիճանի տևողությունը ոչ պակաս, քան 3 տարի՝ չսահմանափակելով երկրորդ աստիճանի տևողությունը:

Արդեն 2005թ.-ին Բերգենում նախարարները գոհունակությամբ նշեցին, որ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը (բակալավրատ/մագիստրատուրա/ դոկտորանտուրա) լայն մասշտաբներով ներդրվում է Բոլոնիայի անդամ գրեթե բոլոր երկրներում՝ ընդգծելով նաև ավելի միասնականորեն կառուցավորված և համընթեռնելի համակարգի ձևավորման անհրաժեշտությունը՝ որպես 2010թ.-ին մեկնարկող ԵԲԿՏ-ի կառուցվածքային հենք: Շատ երկրներում անցումնային փուլում գոյակցում են նորաստեղծ և ավանդական համակարգերը, թեև օրենսդրորեն սահմանված են եռաստիճան համակարգին համատարած անցման վերջնաժամկետներ:

Վերջին զարգացումները

2007թ.-ին Լոնդոնի նախարարական գագաթաժողովում կրկին արձանագրվեց էական առաջընթաց դեպի որակավորումների եռաստիճան համակարգը՝ և՛ ազգային, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներով: Զգալիորեն մեծացել էր առաջին 2 աստիճաններում ներգրավված ուսանողների թիվը, և էապես կրճատվել էին կառուցվածքային արգելանքները աստիճանների միջև տեղափոխումների գործընթացում: Նմանապես աճել էր նաև ստրուկտուրացված դոկտորական ծրագրերի թիվը՝ իրենց պարտադիր կրթական բաղկացուցչով: Միաժամանակ, նախարարները ընդգծեցին ծրագրային ռեֆորմի կարևորությունը, որի թիրախը պետք է լինեն աշխատաշուկայի կարիքներին ու հետագա ուսումնառության հնարավորությանը ավելի լավ հարմարեցված որակավորումները:

Այնուամենայնիվ, կառուցվածքային ռեֆորմին ուղեկցող համաեվրոպական ծրագրային ռեֆորմը դեռևս հանդիպում է որոշակի դժվարությունների: Մասնավորապես, չկա համահամաձայնություն, թե ինչպես տարանջատել տվյալ մասնագիտության ծրագրային բովանդակությունը բակալավրի և մագիստրոսի մակարդակների միջև և ինչպես ապահովել 2 իրարահաջորդ աստիճանների ինքնուրույն ելքը դեպի աշխատաշուկա: Բակալավրի աստիճանը հաճախ ստեղծվում է նախկին “երկարատև” աստիճանի խտացման կամ մեխանիկական երկատման ճանապարհով, իսկ բակալավրի նորաստեղծ “կարճատև” (եռամյա) աստիճանը որոշ եվրոպական երկրներում

դեռևս չի վայելում ուսանողների և գործատուների անհրաժեշտ վստահությունը: Առկա են տարաձայնություններ նաև առաջին և երկրորդ աստիճանների տևողության վերաբերյալ՝ բակալավրի որակավորման համար 3 կամ 4 տարի, իսկ մագիստրոսի որակավորման համար՝ 1-ից 2 տարի: Որոշ ասպարեզներում ակադեմիական որակավորումներին զուգահեռ ներմուծվում են նաև մասնագիտական որակավորումներ:

Ծրագրային ռեֆորմի կապակցությամբ Լոնդոնի կոմյունիկեն շեշտում է շրջանավարտների ծառայունակության բարելավման անհրաժեշտությունը: Որպես որակավորումների եռաստիճան համակարգի ներմուծմանը հետևող քայլ՝ կոմյունիկեն առաջարկում է Բոլոնիայի գործադիր խմբին մանրամասնորեն դիտարկել, թե ինչպես կարելի է բարելավել շրջանավարտների ծառայունակությունը 3 աստիճաններից յուրաքանչյուրում, ինչպես նաև հարատև ուսումնառության համատեքստում: Այս հարցում պետք է պատասխանատվություն կրեն բոլոր շահեկիցները, իսկ կառավարությունները և բուհերը պետք է ավելի շատ հաղորդակցվեն և փոխանակվեն գործատուների և այլ շահեկիցների հետ ծրագրային ռեֆորմի խնդիրների վերաբերյալ: Կառավարությունները, իրենց հերթին, պետք է նոր որակավորումների համակարգերին համատեղելի դարձնեն պետական ծառայության ասպարեզի հաստիքակազմերը և կարիերայի կառուցվածքները: Բուհերին առաջարկվում է զարգացնել գործակցային կապերը և համագործակցությունը գործատուների հետ՝ ելքային կրթական արդյունքների հիման վրա կառուցվող ծրագրային նորաստեղծության ասպարեզում:

Լայն իմաստով ծառայունակությունը շրջանավարտի ունակությունն է՝ ձեռք բերելու սկզբնական աշխատատեղ, պահպանելու այն, ունակ լինել՝ տեղաշարժվելու աշխատաշուկայում: Ծառայունակության բարելավման խնդիրն ընդգրկվել է Բոլոնիայի գործընթացի հաջորդ երկու տարիների գերակայությունների շարքում, իսկ 2007–2009թ.թ. աշխատանքային ծրագրի շրջանակներում ստեղծված աշխատանքային խումբը Բոլոնիայի գործադիր խմբից հանձնարարություն է ստացել 2009թ. նախարարական գագաթաժողովի համար զեկույց նախապատրաստել բոլոր երեք աստիճաններում ծառայունակության բարձրացման ուղիների վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու բակալավրի որակավորման արժևորմանը աշխատաշուկայում, ելքային կրթական արդյունքներով ուղղորդվող ծրագրային նորաստեղծությանը, կարիերայի ծառայությունների ապահովմանը:

Հայաստանի արձագանքը

Ի տարբերություն Բոլոնիայի անդամ շատ երկրների՝ բարձրագույն կրթության երկաստիճան կառուցվածքը Հայաստանում սկիզբ է առել շատ ավելի վաղ, քան Բոլոնիայի գործընթացի պաշտոնական մեկնարկը (1999թ.): Առաջին անգամ այն ներմուծվել է ՀՊՃՀ[1]-ում 1992թ.-ին, որտեղ 1994թ.-ին հիմնվել է նաև ասպիրանտուրային ինտեգրված “հետազոտողի” երրորդ աստիճանը՝ սկզբնավորելով այսպիսով բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի նախատիպը: ԵՊՀ[2]-ն “բակալավրատ/մագիստրատուրա” կառուցվածքը ներդրել է 1995թ.-ին, իսկ ՀՊԱՀ[3]-ը՝ 1996թ.-ին: Մագիստրոսի

[1]Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
[2]Երևանի պետական համալսարան
[3]Հայկական պետական ագրարային համալսարան

կրթական ծրագրով է սկսել իր գործունեությունը ՀԱՀ[4]-ը: Անցումը երկաստիճան (եռաստիճան) համակարգին նշված բուհերում իրականացվել է կրթափորձի կարգով՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների և սեփական կանոնադրությունների հիման վրա:

Բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի նորաստեղծ որակավորումները օրենսդրորեն ամրագրվել են ՀՀ «Կրթության մասին» օրենքով 1999թ.-ին: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության (ԲՀՄԿ) մասին» օրենքի (2004թ.)՝ 2005/06ուս. տարվանից երկաստիճան համակարգը Հայաստանում ներդրվել է համակարգային մակարդակով: Միաժամանակ, ՀՀ բուհերում դադարեցվել է ընդունելությունը դիպլոմավորված մասնագետի ծրագրով, իսկ նույնանուն որակավորումը «ԲՀՄԿ մասին» օրենքում իր կարգավիճակով հավասարեցվել է մագիստրոսի որակավորմանը:

Վկայակոչված 2 օրենքները բավարար օրենսդրական հենք են ստեղծում Հայաստանում Բոլոնիայի գործընթացի պահանջներով նախատեսվող եռաստիճան բարձրագույն կրթական համակարգի ներմուծման համար: Մասնավորապես, այդ օրենքները նախատեսում են հետազոտողի կրթական ծրագրի ներմուծումը և համապատասխան որակավորման շնորհումը հետբուհական կրթության եռամյա ծրագրերի (ասպիրանտուրայի) ելքում, որը, համաձայն Բոլոնիայի գործընթացի տերմինաբանության, ձևավորվող եռաստիճան համակարգի երրորդ աստիճանն է:

ՀՀ բուհական համակարգում առկա են նաև ԵԲԿՏ-ին բնորոշ անցումնային շրջանի արդեն թվարկված բոլոր հիմնախնդիրներն ու թերությունները, որոնք հիմնականում վերաբերում են եռաստիճան համակարգին անցման համար անհրաժեշտ ծրագրային ռեֆորմին: Առանձնանում են ռեֆորմի հետևյալ հիմնահարցերը.

* Կրթական ծրագրերի տնտեսական համապատասխանության բարձրացումը, դրանց պրոֆիլների և բովանդակության մերձեցումը աշխատաշուկայի արդի պահանջմունքներին, ինչը ենթադրում է մասնագիտությունների առկա մանրատված ցանկի վերանայում, խոշորացում և վերակողմնորոշում դեպի շուկայական պահանջարկը:
* Կրթական ծրագրերի ձևավորման մեթոդաբանության վերակառուցում՝ ելակետ ունենալով մասնագիտությունների որակավորման բնութագրիչների և ելքային կրթական արդյունքների, մասնավորապես, մասնագիտական ձիրքերի ու կարողությունների հստակ ձևակերպումը և ծրագրերի մոդուլացումը:
* Բարձրագույն կրթության նորաստեղծ 3 աստիճանների բովանդակության, որակավորման բնութագրիչների, մուտքի և ելքի (ընդունելության և ավարտական ատեստավորման) պայմանների համադրումն ու ներդաշնակեցումը:
* Աշխատաշուկայի հետ հակադարձ կապի հաստատումը, գործատուների ներգրավումը կրթական ծրագրերի փորձաքննության և արդիականացման գործընթացներում:
* Շրջանավարտների ծառայունակության և մրցունակության բարձրացումը:

[4] Հայաստանի ամերիկյան համալսարան

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

2009-ի Բենիլյուքսի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/

ԵԲԿՏ որակավորումների հենքը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/QF-EHEA-May2005.pdf

Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական հենքի առաջարկը:
http://ec.europa.eu/education/policies/educ/eqf/rec08_pt.pdf

Դուբլինյան բնութագրիչներ:
http://www.uni-due.de/imperia/md/content/bologna/dublin_descriptors.pdf

Բրյուգես-Կոպենհագենի գործընթաց:
http://ec.europa.eu/education/copenhagen/index_en.html

Բարձրագույն կրթության ֆորումը որակավորումների հենքերի վերաբերյալ(2007թ.):
http://www.coe.int/t/dg4/highereducation/QF/

Գործողությունների 3-րդ ուղղություն
Կրեդիտների համակարգի հիմնում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

ECTS-ը երևան եկավ դեռևս 20 տարի առաջ՝ որպես կրեդիտների փոխանցման համակարգ ERASMUS ծրագրի շրջանակներում՝ ուսանողների շարժունության ընդլայման և ակադեմիական փոխճանաչման բարելավման նպատակով: Բոլոնիայի գործընթացը կատալիզատոր հանդիսացավ ECTS-ի զարգացման համար ոչ միայն որպես կրեդիտների փոխանցման, այլև որպես կրեդիտների կուտակման մեխանիզմ: Բացի շարժունությանը և ակադեմիական փոխճանաչմանը նպաստելուց, կրեդիտների համակարգը կարևոր դերակատարություն ունի նաև կրթական ծրագրերի կառուցման և հարատև կրթության ասպարեզում նախորդող ուսումնառության արդյունքների ճանաչման գործում: Այսօր ECTS-ը լայնորեն կիրառվում է Բոլոնիայի անդամ երկրներում, հիմնականում առաջին և երկրորդ աստիճանի ծրագրերում՝ որպես կրեդիտների փոխանցման (բուհերի 3/4-ում) և կուտակման (բուհերի 2/3-ում) համապիտանի մեխանիզմ[1]:

Եվրոպական հանձնաժողովը հրատարակել է ECTS-ի օգտագործողի ուղեցույցը, իսկ 2003թ.-ից սահմանել է ECTS-ի որականիշը, որը շնորհվում է ECTS-ի օգտագործման բոլոր կանոնները պատշաճ կերպով պահպանող բուհերին: Որականիշը բարձրացնում է բուհի վարկանիշը՝ որակելով բուհը որպես եվրոպական և միջազգային համագործակցության հուսալի և թափանցիկությամբ օժտված գործընկեր:

ԵԲԿՏ-ում ECTS-ի իրականացման հետ կապված բնութագրական հիմնախնդիրներն են՝

⇒ կրեդիտների հատկացումը կրթական ծրագրի բաղադրամասերին շարունակում է կատարվել ըստ լսարանային ժամերի,

⇒ որակավորումները չեն շնորհվում ուղղակիորեն կուտակված կրեդիտների հիման վրա. դեռևս պահպանվում է ավանդական եզրափակիչ ատեստավորման համակարգը,

⇒ այլ բուհերում շարունակված ուսումնառության ժամանակահատվածների համար ստացած կրեդիտների ճանաչումը ուսանողների վերադարձից հետո երբեմն դառնում է խնդրահարույց:

2003թ.-ի Բեռլինի նախարարական գագաթաժողովը որոշեց ECTS-ը ԵԲԿՏ-ում օգտագործել որպես կրեդիտների փոխանցման և կուտակման համընդհանուր համակարգ: Սակայն Եվրոպայում դեռևս չկա միակարծություն այն հարցի շուրջ, թե ECTS-ը պարունակո՞ւմ է արդյոք համարժեք տեղեկատվություն ելքային կրթական արդյունքների և ուսումնառության մակարդակների վերաբերյալ՝ որպես կուտակողական համակարգ օգտագործվելու հա-

[1]TRENDS V: Universities shaping the European Higher Education Area. An EUA Report, 2007. 100p.

մար, և թե ինչպես հատկացնել կրեդիտներ ուսումնառության ոչ լրիվ ժամանակահատվածների համար:

2005թ.-ի Բերգենի գագաթաժողովում ընդունված ԵԲԿՏ որակավորումների համակապակցող հենքը պարունակում է բնորոշ կրեդիտային միջակայքեր առաջին (180÷240 ECTS կրեդիտներ) և երկրորդ (60÷120 ECTS կրեդիտներ) աստիճանների համար: Դոկտորական մակարդակի որակավորումների համար կրեդիտային միջակայք չի սահմանված:

Վերջին զարգացումները

2007թ.-ի Լոնդոնյան գագաթաժողովն անդրադարձավ ECTS-ի իրականացմանը՝ որպես ծրագրային ռեֆորմի կարևորագույն ասպեկտի: Գրանցելով նախորդող երկամյա ժամանակամիջոցում ակադեմիական փոխճանաչման համատեքստում ձեռք բերված առաջընթացն այս ուղղությամբ՝ Լոնդոնյան կոմյունիկեն հանձնարարում է կենտրոնացնել ջանքերը ECTS-ի պատշաճ իրականացման վրա՝ հիմք ընդունելով ելքային կրթական արդյունքները և ուսանողի ուսումնական բեռնվածությունը:

Այս հանձնարարականն իր արտահայտությունն է ստացել Բոլոնիայի 2007÷2009թթ. աշխատանքային ծրագրում, որտեղ, մասնավորապես, ընդգծվում է, որ “ելքային կրթական արդյունքների և ուսանողի ուսումնական բեռնվածության հիմքով կառուցված ECTS-ի իրականացումը շարունակում է մնալ որպես գերակայություն”: Եվրոպական հանձնաժողովն այս կապակցությամբ քննարկումներ է նախաձեռնել՝ ECTS-ի առանցքային սկզբունքների և ECTS-ի օգտագործողի ուղեցույցի նորացման ուղղությամբ: Ի սկզբանե ECTS-ը պարունակել է և՛ բեռնվածության, և՛ բովանդակության տարրեր, իսկ վերջինս այժմ ընդունված է արտահայտել ելքային կրթական արդյունքների տեսքով: ECTS-ի նորացման ընթացքում հիմնական մոտեցումը կլինի այս տարրերի փոխկապակցումը՝ դիտարկելով ուսանողի ուսումնական բեռնվածությունը որպես “բեռնվածություն, որն անհրաժեշտ է որոշակի ելքային կրթական արդյունքների ձեռքբերման համար”: ECTS-ի նորացված ուղեցույցը, որը կհրապարակվի 2008թ.-ին, ուղղակի հղումներ կպարունակի ելքային կրթական արդյունքների, հարատև ուսումնառության և որակավորումների հենքերին:

Համաձայն Բոլոնիայի աշխատանքային ծրագրի՝ Բոլոնիայի գործադիր խումբը պետք է կազմակերպի մի շարք, այսպես կոչված, Բոլոնիայի սեմինարներ, որոնց հիմնական նպատակը կլինի բարելավել ելքային կրթական արդյունքների համարժեք ընկալումը բուհերի և այլ շահեկիցների կողմից, պարզաբանել ելքային արդյունքների և ECTS-ի փոխկապակցված կիրառությունները որակի ապահովման, որակավորումների փոխճանաչման, ծառայունակության և այլ ասպարեզներում:

Հայաստանի արձագանքը

Դեռևս 2002թ.-ին Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստանի (ԲՀԻ ՕՀՀ) աջակցությամբ սկիզբ առավ ECTS-ի փուլային ներդրման հնգամյա կրթափորձը ՀՊՃՀ-ում՝ առանձին կրթական

ծրագրերի, մասնագիտությունների պիլոտային փնջերի և դեպարտամենտների ընդգրկումով: Կրեդիտային կրթափորձը շուտով ընդլայնվեց՝ ընդգրկելով ՀՀ այլ բուհեր (ԵՊՀ, ՀՊՏՀ[2], ՀՊԱՀ և այլն): Մասնավորապես, ԲՀԻ ՕՀՀ-ի մի շարք նախագծերի շրջանակներում ձևավորված համալսարանական 3 կոնսորցիումներ 2005/06 ուս.տարում նախագծեր են կատարել կրեդիտային հենքով միջբուհական համատեղ կրթական ծրագրերի ստեղծման և բուհերի միջև ակադեմիական կրեդիտների փոխանցման մեխանիզմների մշակման և ներդրման ուղղությամբ: Համաձայն ՀՀ «ԲՀՄԿ մասին» օրենքի, 2007/08 ուս. տարվանից սկսվել է կրեդիտային համակարգի համընդհանուր ներդրումը ՀՀ բուհերում:

ՀՀ կառավարության «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» 2005թ. որոշումը համակարգված ձևով ներկայացնում է կրեդիտային համակարգին ՀՀ բուհերի անցման համալիր միջոցառումների ցանկը: 2006թ.-ին կառավարությունը կրկին անդրադարձավ կրեդիտային համակարգին՝ Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցի[3] շրջանակներում: Որպես այս որոշման հաջորդող գործողություն՝ 2007թ.-ին ԿԳՆ-ն ստեղծեց բուհերի և նախարարության ներկայացուցիչներից կազմված “ՀՀ Բարձրագույն կրթության ազգային կրեդիտային համակարգի մշակման համատեղ աշխատանքային խումբ”: Խումբը մշակել է գործողությունների ծրագիր, ECTS-ի պահանջներին համապատասխանող ՀՀ կրեդիտային համակարգի նորմատիվային հենք, ինչպես նաև՝ «Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ»:

Հայաստանում հիմնականում կրկնվում են եվրոպական բուհերի վերը թվարկված բնութագրական հիմնախնդիրներն այս ասպարեզում, որոնց գումարվում են նաև կրեդիտների միջբուհական փոխանցմանը և ուսանողական շարժունությանը չնպաստող օրենսդրական դաշտի հարուցած խոչընդոտները:

[2] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

[3] ՀՀ կառավարության թիվ 43-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին» (ընդունված 02.11.2006թ.)

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ (ECTS): http://ec.europa.eu./education/programmes/socrates/ects/index_en.html

Եվրահանձնաժողովի ECTS-ի օգտագործողի ուղեցույցը: http://ec.europa.eu./education/programmes/socrates/ects/doc/guide_en.pdf

Եվրահանձնաժողովի դիպլոմի հավելվածի ուղեցույց և դիպլոմի հավելվածի որականիշ: http://ec.europa.eu/education/policies/rec_qual/recognition/diploma_en.html

Համաեվրոպական դիպլոմի հավելվածի օրինակ: http://ec.europa.eu/education/programmes/socrates/ects/doc/form4.pdf

Միջին մասնագիտական և արհեստագործական կրթության եվրոպական կրեդիտային համակարգ (ECVET): http://ec.europa.eu/education/policies/2010/doc/ecvt2005_en.pdf

ENIC-NARIC ցանցեր: http://www.enic-naric.net/

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ArmEnic): http://www.armenic.am/

Գործողությունների 4-րդ ուղղություն

Աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական ու վարչական կազմի շարժունությանը

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Ուսանողների և դասախոսների՝ երկրից երկիր և բուհից բուհ անարգել շարժունությունը ձևավորվող ԵԲԿՏ-ի բնութագրական հատկանիշներից է: Խոսքը վերաբերում է նաև ուսումնական նպաստների, կրթաթոշակների և ուսումնական վարկերի անարգել միջպետական տեղափոխման հնարավորությանը: Պատահական չէ, որ այս ուղղությունը սկիզբ է առնում Բոլոնիայի գործընթացի մեկնարկային հիմնարար խնդիրներից և իր ձևակերպումն է ստացել դեռևս 1999թ.-ին՝ Բոլոնիայի հռչակագրում: Բեռլինի կոմյունիկեում (2003թ.) ուսանողների, դասախոսների և վարչակազմի շարժունությունը որակվել է որպես "հիմք ԵԲԿՏ-ի կառուցման համար": Շարժունության զարգացմանը նպաստող էական գործոններ են կրեդիտների ավելի լայն օգտագործումը, որակավորումների հենքերի զարգացումը և որակի հավաստումը՝ միասնական եվրոպական չափանիշներով: Միաժամանակ, կարևորվում է շարժունությանը խոչընդոտող իրավական և այլ արգելքների վերացումը, որի անհրաժեշտությունն ընդգծվել է նաև 2005թ.-ի Բերգենի նախարարական գագաթաժողովում:

Վերջին զարգացումները

Բոլոնիայի գործընթացի դիտարկվող ուղղությունը հատուկ ուշադրության է արժանացել 2007թ.-ի Լոնդոնի նախարարական գագաթաժողովում, որի եզրափակիչ կոմյունիկեում անձնակազմի, ուսանողների և շրջանավարտների շարժունությունը գնահատվել է որպես "Բոլոնիայի գործընթացի պարտադիր տարրերից մեկը, որը ստեղծում է անձնական աճի հնարավորություններ, զարգացնում միջազգային համագործակցությունը անհատների և հաստատությունների միջև, բարձրացնում բարձրագույն կրթության և հետազոտությունների որակը, նյութականացնում եվրոպական չափայնությունը": Նշելով որոշ առաջընթացն այս ուղղությամբ՝ Լոնդոնյան կոմյունիկեն արձանագրում է նաև շատ արգելքների պահպանումը, որոնք հիմնականում առնչվում են որակավորումների ճանաչմանը, այցահրավերների ձևակերպմանը, շարժունության ֆինանսական սահմանափակումներին ու խթաններին և առաջադրում որոշակի խնդիրներ՝ շարժունության ընդլայնման և երկրների միջև ուսանողական փոխադարձ հոսքերի հավասարակշռման ուղղությամբ: Կարևորվում է շարժունությանը նպաստող համատեղ միջբուհական ծրագրերի և ճկուն կրթական "հետագծերի" զարգացումը:

Լոնդոնի կոմյունիկեում ակադեմիական շարժունությունն ընդգրկվել է Բոլոնիայի գործընթացի մինչև 2009թ.-ն ընկած շրջանի գերակայությունների շարքում, իսկ Բոլոնիայի անդամ երկրները պարտավորվել են 2009թ.-ին ներկայացվելիք ազգային զեկույցներում արտացոլել շարժունությանը նպաստող համակարգային միջոցառումների արդյունքները: Բոլոնիայի գործադիր խմբի կողմից մշակված Բոլոնիայի 2007÷2009թթ. աշխատանքային

ծրագրում[1] նախատեսված են մի շարք միջոցառումներ անդամ երկրների շարժունությանը նպաստող գործողությունների կոորդինացման և Բոլոնիայի գործողությունների այլ ուղղությունների հետ (գլոբալ չափայնության, սոցիալական ուղղվածության և այլն) դրանց փոխկապակցման նպատակով: Այս ծրագրի շրջանակներում ստեղծված է համակարգող խումբ, նախատեսված են շարժունության առաջընթացին ուղղված տեղեկատվական արշավ, նպատակային սեմինարներ և ուսանողների շարժունության աջակցման փորձագիտական ցանց:

Եվրոպական միությունը հովանավորել է շարժունության մի շարք ծրագրեր (Socrates Erasmus, Erasmus Mundus և այլն), որոնք կոչված են խրախուսելու ուսանողներին և դասախոսներին՝ ուսումնառության կամ փորձառական որոշակի շրջան անցկացնելու Եվրոպայի այլ բուհերում: Վերջերս մեկնարկել է հարատև կրթության ինտեգրացված գործողությունների ծրագիրը 2007-2013թ.թ. ժամանակաշրջանի համար, որը փոխարինելու է Սոկրատես ծրագրին և նպատակ ունի ապահովելու ուսանողների և դասախոսների շարժունության կտրուկ աճը:

Հայաստանի արձագանքը

Միջազգային շարժունությունը Հայաստանի բուհերից և դեպի Հայաստանի բուհեր դեռևս պլանաչափ բնույթ չի կրում և չի կոորդինացվում համակարգային մակարդակով: Շարժունության իրականացման հիմնական ձևերն են՝ ուսանողների փոխանակումը միջպետական համաձայնագրերի շրջանակներում, միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների դրամաշնորհային ծրագրերը և ուսանողների տեղափոխումները արտասահմանյան բուհեր սեփական նախաձեռնությամբ: Շարժունության ընդլայնմանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝ շարժունության և փոխճանաչման եվրոպական գործիքների (ECTS, Դիպլոմի եվրոպական հավելված, որակավորումների ԵԲԿՏ հենքին համադրելի որակավորումների ազգային հենք) ոչ լիարժեք օգտագործումը կամ բացակայությունը, Հայաստանի բուհերի անբավարար մասնակցությունը շարժունության աջակցման եվրոպական ծրագրերին և այս ուղղությամբ պետական դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը:

2007թ. ԵՊՀ-ն, ՀՊՏՀ-ն, ՀՊԱՀ-ն և ԳՊՄԻ[2]-ն սկսեցին մասնակցել Եվրոպական միության Erasmus Mundus-ի "Արտաքին համագործակցության պատուհան" շարժունության ծրագրին: Բոլորովին վերջերս ՀՀ կառավարությունը քայլեր է նախաձեռնել ՀՀ դպրոցների շնորհաշատ շրջանավարտների և բուհերի ուսանողների՝ արտերկրի բուհերում ուսուցման աջակցության պետական հիմնադրամի ստեղծման ուղղությամբ: Ինչպես ասվեց, 2005թ.-ից գործում է Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ArmENIC), որը ներկայացնում է երկիրը ENIC/NARIC ցանցում: Կենտրոնը մշակել է փոխճանաչման գործողությունների ազգային պլան և EU/CoE/UNESCO-ի ձևաչափին համապատասխանող դիպլոմի եվրո-

[1] "Towards the European Higher Education Area - An Integreted Work Programme for 2007-2009". Bologna work programme 2007-2009 (consolidated version of 14/01/2008). Issue date: 09 January 2008. 26 pages.

[2] Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ

պական հավելվածի հայկական տարբերակը, որն արդեն հաստատվել է ՀՀ կառավարության կողմից (նոյեմբեր, 2007) և շուտով կներդրվի ՀՀ բուհերում: Կենտրոնը մասնակցելու է Բոլոնիայի 2007÷2009թթ. աշխատանքային ծրագրով նախատեսված ուսանողների աջակցման փորձագիտական ցանցին:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Erasmus Mundus ծրագիրը: http://ec.europa.eu/education/prorammes/mundus/index_en.html

Socrates Erasmus ծրագիրը: http://ec.europa.eu/education/programmes/socrates/erasmus/what_en.html

Ուսանողների եվրոպական միություն (ESU): http://www.esib.org/

ENIC-NARIC ցանցեր: http://www.enic-naric.net/

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ArmEnic): http://www.armenic.am/

Բոլոնիայի գործընթացի 2007-2009թթ. աշխատանքային ծրագիրը: http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/Bologna_work_programme_2007-2009_030308.pdf

2007-ի Լոնդոնի նախարարական գագաթաժողովի կայքէջը: http://www.dfes.gov.uk/londonbologna/

Գործողությունների 5-րդ ուղղություն
Աջակցություն որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցությանը

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Որակի ապահովումն առանցքային դեր ունի Բոլոնիայի՝ եվրոպական բարձրագույն կրթության մրցունակության բարձրացման նպատակի իրագործման ճանապարհին: Միաժամանակ, եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում կոչված է դյուրացնելու որակավորումների համեմատությունը և փոխճանաչումը ԵԲԿՏ տարածքում: Բոլոնիայի բոլոր նախարարական գագաթաժողովներն անդրադարձել են որակի ապահովման հիմնախնդրին, իսկ 2003թ.-ի Բեռլինի գագաթաժողովում այն առանձնացվեց որպես Բոլոնիայի գործընթացի գերակայություններից մեկը հաջորդ 2 տարիների համար: Այստեղ առաջին անգամ ընդգծվեց, որ որակի ապահովման համար առաջնային պատասխանատվություն են կրում բուհերը, իսկ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) լիազորություն ստացավ՝ մինչև 2005թ.-ը մշակելու որակի ապահովման ստանդարտների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված համակարգ: ԵԲԿՏ Որակի ապահովման եվրոպական ստանդարտներն ու ուղենիշները, որոնք մշակվեցին ENQA-ի կողմից՝ Եվրոպական համալսարանական ասոցիացիայի (EUA), Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիայի (EURASHE) և Ուսանողների եվրոպաական միության (ESU) հետ համատեղ, ընդունվեցին 2005թ.-ի Բերգենի նախարարական գագաթաժողովում: Նշված չորս կազմակերպությունները կազմում են, այսպես կոչված, E-4 խումբը, որն առանցքային դերակատարություն ունի որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցության զարգացման գործընթացներում:

ԵԲԿՏ որակի ապահովման ստանդարտներն ու ուղենիշներն ընդգրկում են հետևյալ 3 կառուցամասերը՝

⇒ եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ՝ բուհերում որակի ներքին ապահովման համար,

⇒ եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ՝ բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համար,

⇒ եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ՝ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար:

Բացի դրանից, եվրոպական ստանդարտները ներառում են նաև երաշխավորություններ հետևյալ ուղղություններով՝

⇒ որակի ապահովման եվրոպական գործակալությունների փորձաքննության համակարգ,

⇒ որակի ապահովման գործակալությունների եվրոպական ռեգիստր (գրանցամատյան),

⇒ բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական խորհրդատվական ֆորում:

Որակի ապահովման ուղղությամբ եվրոպական համագործակցության զարգացման մեջ էական ներդրում ունի նաև Եվրոպական հանձնաժողովը, թեև Բոլոնիայի գործընթացի աշխարհագրական ընդգրկումը դուրս է գալիս Եվրոպական միության սահմաններից:

Վերջին զարգացումները

Լոնդոնի նախարարական գագաթաժողովում (2007թ.) ընդգծվեց, որ 2005թ.-ին Բերգենում ընդունված Որակի ապահովման եվրոպական ստանդարտներն ու ուղենիշները հզոր շարժիչ են հանդիսացել որակի ապահովման ասպարեզում փոփոխությունների համար: Բոլոր անդամ երկրները սկսել են կիրառել դրանք, իսկ որոշ երկրներում արդեն առկա է զգալի առաջընթաց մասնավորապես որակի արտաքին ապահովման ուղղությամբ: Նկատելի է նաև ուսանողների աճող մասնակցությունը որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացներում: Հատուկ ուշադրություն է հրավիրվում որակի ապահովման ներբուհական համակարգերի հետագա զարգացմանը, քանի որ բուհերն են շարունակում կրել առաջնային պատասխանատվություն բարձրագույն կրթության որակի, ինչպես նաև հավատարմագրման և որակի հավաստման եզրակացությունների փոխճանաչման համար տարբեր երկրների միջև: Վերջինս պահանջում է շարունակել և զարգացնել միջազգային համագործակցությունը որակի ապահովման եվրոպական գործակալությունների միջև:

Լոնդոնում նախարարները համաձայնվեցին E-4 խմբի առաջարկությանը՝ ստեղծելու Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստր (EQAR)՝ որպես շահույթ չհետապնդող միջազգային կազմակերպություն, որի հիմնադիրներն են E-4 խմբի կազմակերպությունները: Ռեգիստրը, որի նպատակն է հանրությանն ապահովել որակի ապահովման գործակալությունների վերաբերյալ անաչառ և հուսալի տեղեկատվությամբ, պետք է առաջնորդվի կամավոր մասնակցության սկզբունքով, լինի ինքնաֆինանսավորվող և անկախ:

Բարձր գնահատելով E-4 խմբի կողմից կազմակերպված որակի ապահովման եվրոպական առաջին համաժողովը՝ որպես այս ասպարեզում եվրոպական զարգացումների քննարկման լավագույն հնարավորություն, Լոնդոնի կոմյունիկեով առաջարկվում է շարունակել և զարգացնել այս փորձը տարեկան պարբերականությամբ: 2007թ.-ի նոյեմբերին տեղի է ունեցել որակի ապահովման եվրոպական երկրորդ համաժողովը:

Լոնդոնի կոմյունիկեի համաձայն՝ Բոլոնիայի 2007–2009թ.թ. աշխատանքային ծրագիրը նախատեսում է մի շարք միջոցառումներ որակի ապահովման/հավաստման ուղղությամբ, այդ թվում՝ EQAR-ի պաշտոնական մեկնարկը 2008թ. հունիսին և Բոլոնիայի ստորագրյալ երկրների անդամակցության դիմումների ընդունումը, ինչպես նաև EQAR-ի կոմիտեի ստեղծումը և հաշվետվությունների ներկայացումը Բոլոնիայի գործադիր խմբին: Ռեգիստրի կազմավորումն ու գործարկումը, որը համարվում է Բոլոնիայի գործընթացի կարևորագույն իրադարձություն դիտարկվող ուղղությամբ, կոչված է էական խթանող դեր խաղալու բարձրագույն կրթության որակի ապահովման ասպարեզում՝ եվրոպական համագործակցության զարգացման գործընթացում:

Հայաստանի արձագանքը

Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման և պետական վերահսկողության գործընթացները (լիցենզավորում, հավատարմագրում և ընթացիկ ատեստավորում) և դրանց առնչվող մարմինների լիազորություններն այդ բնագավառում կարգավորվում են «Կրթության մասին» և «ԲՀՄԿ մասին» օրենքներով, ինչպես նաև «Լիցենզավորման» և «Հավատարմագրման» կարգերով[1]: Բարձրագույն կրթության համակարգում որակի վերահսկման և հավատարմագրման պատասխանատվությունը օրենսդրորեն վերապահված է կրթության պետական կառավարման լիազորված մարմնին՝ Կրթության և գիտության նախարարությանը, որն այն իրականացնում է Լիցենզավորման և հավատարմագրման ծառայության միջոցով:

Որակի ապահովման ասպարեզում ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների համար հիմք են հանդիսանում Որակի ապահովման եվրոպական ստանդարտներն ու ուղենիշները: Դրանց կատարման համար Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացման ժամանակացույցը[2] նախատեսում է 3 հիմնական միջոցառումներ՝

* որակի ապահովման ազգային ծառայության ստեղծում,
* որակի գնահատման և ապահովման համակարգի հայեցակարգի մշակում,
* որակի ապահովման եվրոպական ասոցիացիային Հայաստանի անդամակցության նախապատրաստում:

Համաձայն ժամանակացույցի՝ ՀՀ կառավարության որոշմամբ շուտով կհիմնվի մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը: Այն իր կարգավիճակով, կառուցվածքով և գործառույթներով պետք է համապատասխանի Որակի ապահովման եվրոպական ստանդարտներին և ուղենիշներին (մաս 3)՝ պատասխանատու լինելով որակի արտաքին ապահովման/հավաստման ազգային համակարգի, մասնավորապես, արտաքին գնահատման, հավատարմագրման, դրանց չափանիշների ու ընթացակարգերի ստեղծման, ներդրման և իրականացման համար:

2007թ.-ին մշակվել, ԿԳՆ կողմից հավանության արժանացել ու հրապարակվել է "ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի համապատասխանեցումը Եվրոպական (ENQA) ստանդարտներին և ուղենիշներին" փաստաթուղթը[3], որը ներկայացնում է հայեցակարգային հիմնադրույթներ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգի

---

[1]Կարգ Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման: Կարգ Հայաստանի Հանրապետությունում միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման: Հաստատված են ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի N372 որոշմամբ:

[2]ՀՀ կառավարության թիվ 43-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին» (ընդունված 02.11.2006թ.):

[3] Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. ՀՀ **բարձրագույն կրթության որակի ապահովման** համակարգի համապատասխանեցումը Եվրոպական (ENQA) ստանդարտներին և ուղենիշներին: Բարեփոխումների ռազմավարության հայեցակարգային հիմնադրույթներ: Երևան, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2007. 48 էջ:

ձևավորման և համապատասխան բարեփոխումների ռազմավարության համար:

Թեև ՀՀ բուհերը դեռևս չունեն եվրոպական չափանիշներով որակի ներքին ապահովման ձևավորված ներբուհական համակարգեր, այնուամենայնիվ, առկա են այս համակարգերի որոշակի տարրեր՝ ուսուցման որակի գնահատման և վերահսկման գործընթացների, ընթացակարգերի և մեթոդական գործիքների տեսքով: Վերջերս ՀՀ որոշ բուհեր կոնկրետ քայլեր են ձեռնարկել որակի ապահովման ներքին համակարգերի ձևավորման ուղղությամբ: Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայաստանյան հիմնադրամի հովանավորությամբ ՀՊՃՀ-ն, ԵՊՀ-ն, ԵՊԲՀ[4]-ն և ՎՊՄԻ[5]-ն փոխկապակցված պիլոտային նախագծեր են իրականացնում որակի սեփական համակարգերի ստեղծումը նախապատրաստելու համար: Այնուամենայնիվ, որակի ներքին ապահովման համակարգերի ստեղծման գործընթացը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում, չունի համակարգային ընդգրկում և միջազգային փորձագիտական աջակցության ու համակարգային կոորդինացման կարիք ունի:

[4] Երևանի պետական բժշկական համալսարան
[5] Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA):
http://www.enqa.eu/

ԵԲԿՏ-ում որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ:
http://www.enqa.eu/files/ESG_v03.pdf

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA):
http://www.eua.be/index.php

EUA-ի «Որակի մշակույթ» նախագիծը:
http://www.eua.be/index.php?id=111

Որակի ապահովման 1-ին եվրոպական համաժողով:
http://www.eua.be/index.php?id=108

Որակի ապահովման 2-րդ եվրոպական համաժողով:
http://www.eua.be/index.php?id=462

«Որակի համատեղ նախաձեռնություն» ցանցը:
http://www.jointquality.nl/

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանց (INQAAHE): http://www.inqaahe.org/

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանց (CEE NETWORK):
http://www.ceenetwork.hu/

Բարձրագույն կրթության որակի ապահովման սկանդինավյան (Նորդիկ) ցանց (NOQA):
http://www.noqa.net/

Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհուրդ, ԱՄՆ (CHEA):
http://www.chea.org/default.asp

Գործողությունների 6-րդ ուղղություն
Բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Բարձրագույն կրթության եվրոպական չափայնության հիմնական իմաստը "եվրոպական բովանդակությամբ" համատեղ կրթական ծրագրերի իրականացումն ու համատեղ որակավորումների շնորհումն է ԵԲԿՏ-ի բուհերի կողմից: Համատեղ ծրագրերը ԵԲԿՏ-ում ծրագրային մերձեցմանը, շարժունության խթանմանը և եվրոպական կրթության գրավչության բարձրացմանը նպաստող կարևոր լծակ են:

Բոլոնիայի գործընթացի այս ուղղությունը Բոլոնիայի հիմնադիր հռչակագրում ի սկզբանե ձևակերպվել է հետևյալ կերպ՝ "անհրաժեշտ եվրոպական չափայնության խթանում բարձրագույն կրթության ասպարեզում, մասնավորապես, կապված ծրագրային զարգացման, միջբուհական համագործակցության, շարժունության սխեմաների և կրթական, վարժանքային ու հետազոտական ինտեգրացված ծրագրերի հետ":

Պրագայի կոմյունիկեն (2001թ.) ավելի կոնկրետացրեց այս ուղղության խնդիրը՝ կոչ անելով "բոլոր մակարդակներում ընդլայնել «եվրոպական» բովանդակությամբ, կողմնորոշմամբ կամ կազմակերպման ձևով մոդուլների, դասընթացների և կրթական ծրագրերի մշակումը": Սա, մասնավորապես, վերաբերում է այն ուսումնական մոդուլներին, դասընթացներին և աստիճանաշնորհող ծրագրերին, որոնք առաջարկվում են տարբեր երկրների գործընկեր բուհերի կողմից՝ հանգեցնելով միմյանց կողմից ճանաչվող համատեղ որակավորումների շնորհմանը:

2003թ.-ին Բեռլինյան գագաթաժողովում, նշելով որոշակի առաջընթացը համատեղ միջբուհական ծրագրերի ստեղծման ուղղությամբ բարձրագույն կրթության բոլոր 3 աստիճաններում, նախարարները պայմանավորվել են ազգային մակարդակներում "վերացնել արգելքները համատեղ աստիճանների (որակավորումների) հիմնման և ճանաչման ուղղությամբ և աջակցել համատեղ աստիճանների ինտեգրացմանն ուղղված (համատեղ) կրթական ծրագրերի զարգացմանը և համարժեք որակի ապահովմանը":

Ընդգծելով գործողությունների դիտարկվող ուղղության նշանակությունը՝ 2005թ.-ի Բերգենյան նախարարական գագաթաժողովն այն ներառել է Բոլոնիայի գործընթացի հաջորդ երկամյա շրջանի գերակայությունների շարքում:

Եվրոպայի խորհուրդը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2004թ.-ին հաստատել են համատեղ աստիճանների ճանաչման վերաբերյալ Ստոկհոլմյան երաշխավորությունները[1]՝ որպես Լիսաբոնի փոխճանաչման կոնվենցիայի հավելում[2]: Երաշխավորությունները հավանության են արժանացել նաև Բերգենյան նախարարական գագաթաժողովում:

---

[1]Memorandum. The Stockholm Conclusions – Conclusions and recommendations of the Seminar on Joint Degrees within the framework of the Bologna Process. 31 May 2002, 3p.

[2]The Committee of the Convention on the Recognition of Qualifications concerning Higher Education in the European Region: „Recommendations on the Recognition of Joint Degrees“, adopted on 9 June 2004, 6p.

Վերջին զարգացումները

Համատեղ ծրագրերին և համատեղ որակավորումներին նվիրված Բոլոնիայի Բեռլինյան սեմինարը (2006թ.) երաշխավորեց այս ասպարեզում եվրոպական լավագույն փորձի ամփոփման հիման վրա սահմանել նոր համատեղ ծրագրերի ստեղծման "ոսկե կանոններ", իսկ ազգային բարձրագույն կրթական օրենսդրություններում ամրագրել համատեղ միջբուհական որակավորումների շնորհման հնարավորությունը՝ ելնելով Լիսաբոնի փոխճանաչման կոնվենցիայի վերոհիշյալ հավելումից:

Լոնդոնյան նախարարական գագաթաժողովում (2007թ.) հատուկ ընդգծվեց ակադեմիական շարժունության դերը՝ որպես Բոլոնիայի գործընթացի տարրի, որը "նյութականացնում է եվրոպական չափայնությունը":

Եվրոպական համալսարանական ասոցիացիայի (EUA) մագիստրոսի համատեղ նախագծում[3] (2002?2004թթ.) ուսումնասիրվել են մագիստրոսի համատեղ ծրագրերի իրականացման արդյունքները Եվրոպայում, և ձևակերպվել այն 10 "ոսկե կանոնները", որոնց պետք է համապատասխանեն մագիստրոսի նորաստեղծ համատեղ ծրագրերը ԵԲԿՏ-ում: Ավելի ուշ մեկնարկած EUA-ի դոկտորական ծրագրերի նախագիծը (2004?2005թթ.) նույնպես նպատակ ուներ աջակցելու համատեղ կրթական ծրագրերի ստեղծմանը դոկտորական մակարդակում՝ միջբուհական ընդլայնվող համագործակցության և միջազգային շարժունության զարգացման միջոցով: Մասնավորապես, այս նախագծի շրջանակներում է ծնվել նաև եվրոպական դոկտորատի գաղափարը:

Մագիստրոսի համատեղ ծրագրերի զարգացման համար զգալի դեր է խաղացել Եվրոպական հանձնաժողովի շարժունության աջակցության Էրազմուս-Մունդուս ծրագիրը, որը երեք կամ ավելի եվրոպական երկրների համալսարանական կոնսորցիումի կողմից կրթաթոշակներ է առաջարկում այլ երկրների ուսանողներին՝ մագիստրոսի ծրագրով ուսանելու համար:

EUA-ի վերջին հարցումների արդյունքները վկայում են[4], որ եվրոպական ուսումնասիրված բուհերի շուրջ 60%-ն արդեն ունի համատեղ ծրագրեր բարձրագույն կրթության երեք աստիճաններից առնվազն մեկում, ընդ որում, այսօր գերիշխում են մագիստրոսի մակարդակով համատեղ ծրագրերը:

Հայաստանի արձագանքը

Հայաստանում փաստորեն չեն եղել համատեղ կրթական ծրագրերի ստեղծման էական փորձ և այս ուղղությամբ միջբուհական համագործակցության ավանդույթներ: 1995թ.-ին ՀՊՃՀ-ն ՀԱՀ-ի հետ նախաձեռնեց մագիստրոսի 2 կրթական ծրագրերի համատեղված ուսուցում՝ այս երկու համագործակցող բուհերի կողմից շրջանավարտների կրկնակի աստիճանաշնորհումով: Կրթափորձը կարճ տևեց՝ ուսանողների՝ երկու բուհերում միաժամանակ գրանցման և աստիճանաշնորհման իրավական մեխանիզմների բացակայության պատճառով:

---

[3]Tauch C./Rauhvargers A. (2002). Survey on Master Degrees and Joint Degrees in Europe. Genf: European University Association. Siehe : http://www.eua.be/fileadmin/user_upload/files/EUA1_documents/Survey_Master_Joint_degrees_en.1068806054837.pdf

[4]Trends V: Universities shaping the European Higher Education Area. An EUA Report, 2007. 100pages.

Հաջորդ փորձը “Մենեջմենտի տեղեկատվական համակարգեր” մագիստրոսի ինտեգրացված կրթական ծրագիրն էր ՀՊՃՀ-ի, ԵՊՀ-ի և ՀՊՏՀ-ի միջև՝ USAID-ի ֆինանսական և Նյու Յորքի համալսարանի փորձագիտական աջակցությամբ (2004թ.): 2005թ.-ին այս կրթափորձը նորովի շարունակվեց Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայաստանյան հիմնադրամի հովանավորությամբ ստեղծված 3 բուհական կոնսորցիումների կողմից, որոնք իրականացրին կոնկրետ նախագծեր մագիստրոսի համատեղ ծրագրերի ստեղծման և կրեդիտների միջբուհական փոխանցման մեխանիզմների փորձարկման ուղղությամբ: Այնուամենայնիվ, այս նախագծերը հետագայում չվերածվեցին շարունակական համատեղ միջբուհական ծրագրերի և չունեցան համակարգային ներգործություն ու ընդգրկում՝ հիմնականում այլ բուհերում ուսուցման արդյունքների (կրեդիտների) ճանաչման և հատկապես համատեղ աստիճանաշնորհման մեխանիզմների ու օրենսդրական հիմքի բացակայության պատճառով: Եվրոպական բուհերի հետ համատեղ ծրագրերի իրականացման խոչընդոտ է նաև ուսանողների միջազգային շարժունության համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Ստոկհոլմի սեմինարի երաշխավորությունները համատեղ աստիճանների վերաբերյալ:
http://www.bologna-berlin2003.de/pdf/Stockholm_results.pdf

Երաշխավորություններ համատեղ աստիճանների ճանաչման վերաբերյալ:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/LRC/Recommendation_joint_degrees_9-June-2004.pdf

EUA-ի մագիստրոսի համատեղ նախագիծը: http://www.eua.be/index.php?id=62

EUA-ի դոկտորական ծրագրերի նախագիծը: http://www.eua.be/index.php?id=107

Erasmus Mundus ծրագիրը: http://ec.europa.eu/education/prorammes/mundus/index_en.html

Գործողությունների 7-րդ ուղղություն
Հարատև կրթության կարևորում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Հարատև կրթությունը (հարատև ուսումնառությունը) ինչպես Բոլոնիայի գործընթացի, այնպես էլ Եվրոպական միության կրթական քաղաքականության կիզակետում է, քանի որ ունի առանցքային դեր Եվրամիության Լիսաբոնյան ստրատեգիայի (2000թ.) հիմնական նպատակի իրագործման համար, այն է՝ դարձնել Եվրոպան աշխարհում ամենամրցունակ և դինամիկ գիտահենք տնտեսական տարածքը: Այսօր հարատև կրթությունը ԵԲԿՏ-ի կարևորագույն տարրերից մեկն է, որը փաստորեն ներգործություն ունի եվրոպական բարձրագույն կրթության բոլոր ասպեկտների վրա՝ շարժունություն, որակավորումների ճանաչում, հեռավար ուսուցում և այլն:

Արձագանքելով Լիսաբոնյան նպատակներին՝ 2001թ.-ին Եվրոպական կրթության նախարարները Պրագայի կոմյունիկեում հարատև կրթությունը դարձրին Բոլոնիայի գործընթացի գործողությունների առանձին ուղղություն: 2003թ.-ի Բեռլինի նախարարական գագաթաժողովն ընդգծեց բարձրագույն կրթության կարևոր ներդրումը հարատև ուսումնառության գաղափարի իրագործման մեջ՝ կոչ անելով ստեղծել որակավորումների այնպիսի հենքեր, որոնք կնախատեսեն ճկուն կրթական “հետագծեր”, ուսումնառության այլընտրանքային հնարավորություններ ու տեխնոլոգիաներ և հնարավոր կդարձնեն ECTS կրեդիտների օգտագործումը հարատև կրթության ծրագրերում:

2001թ.-ին ձևավորվեց հարատև կրթության եվրոպական տարածքի գաղափարը, որը բխում է Լիսաբոնյան ստրատեգիայից և կոչված է խթանելու եվրոպական համագործակցությանն այս ասպարեզում, իսկ 2002թ.-ին Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնությամբ սկիզբ առավ Բրյուգես-Կոպենհագենի գործընթացը, որը հիմնականում վերաբերում է միջին մասնագիտական և արհեստագործական կրթությանը:

Վերջին զարգացումները

Անդրադառնալով Բոլոնիայի գործընթացի դիտարկվող ուղղության առկա վիճակին՝ Լոնդոնյան կոմյունիկեն (2007թ.) արձանագրում է, որ հարատև կրթությանն աջակցող ճկուն ուսումնառության տարրեր կան եվրոպական երկրների մեծամասնությունում, թեև հարատև կրթության այլընտրանքային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ճկուն ուսումնական ”հետագծերի” համակարգված զարգացումը դեռևս նախնական փուլում է: Այս կապակցությամբ Բոլոնիայի գործադիր խումբը մոտակա 2 տարիներին խնդիր ունի խթանելու լավագույն փորձի տարածումը և ձևավորելու ընդհանուր վերաբերմունք հարատև կրթության ասպարեզում բուհական համակարգի որոշիչ դերի վերաբերյալ: Կարևորվում է նաև նախորդող ուսուցման արդյունքների ճանաչումը ինչպես նոր ծրագրերի ընդունման, այնպես էլ նախկինում հավաքած կրեդիտների փոխանցման և հաշվառման տեսանկյունից:

Ելնելով Լոնդոնյան կոմյունիկեի առաջադրած խնդիրներից՝ Բոլոնիայի 2007-2009թթ. աշխատանքային ծրագրում նախատեսվել են մի շարք միջոցառումներ (եվրոպական և տարածաշրջանային խորհրդակցություններ, սեմինարներ, վերլուծական զեկույցներ), որոնք վերաբերում են հարատև կրթության զարգացման հետևյալ 3 ասպեկտներին՝

* նախորդած ուսուցման արդյունքների ճանաչում,
* ճկուն կրթական "հետագծերի" և որակավորումների ազգային հենքերի զարգացում, որոնք կտարածվեն նաև հարատև կրթության ծրագրերի վրա,
* հարատև կրթությունը և նրա կապը բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության հետ:

Այս ուղղությամբ նույնպես ստեղծվել է համակարգող խումբ, որը պետք է ապահովի հարատև կրթության ասպարեզում Բոլոնիայի գործընթացին առնչվող միջոցառումների համակարգումը և համապատասխան երաշխավորությունների մշակումը:

Լոնդոնյան կոմյունիկեն անդրադարձել է նաև շրջանավարտների ծառայունակության բարձրացման հիմնահարցին ինչպես եռաստիճան բարձրագույն կրթության համակարգի, այնպես էլ հարատև կրթության համատեքստում՝ առաջադրելով աշխատաշուկայի հետ փոխկապակցության համակողմանի զարգացման խնդիրը:

Հարատև կրթության զարգացմանը էական աջակցություն են ցուցաբերում նաև Եվրախորհրդարանը և Եվրամիության խորհուրդը, որոնց նախաձեռնությամբ ստեղծվել է հարատև կրթության եվրոպական տարածքի ձևավորմանն ուղղված գործողությունների համալիր ծրագիր[1] մինչև 2013թ. ընկած ժամանակահատվածում: Եվ վերջապես, 2007թ. հոկտեմբերին Եվրախորհրդարանը երաշխավորություն ընդունեց Հարատև կրթության որակավորումների եվրոպական հենքի վերաբերյալ, որը ներառում է ինչպես ընդհանուր, արհեստագործական և մեծահասակների կրթությունն ու վարժանքային ծրագրերը, այնպես էլ բարձրագույն կրթությունն իր բոլոր բաղկացուցիչ որակավորումներով: Այն ներմուծում է կրթության 8 բազային մակարդակներ՝ իրենց բնութագրական ելքային կրթական արդյունքներով, և կոչված է փոխկապակցելու ու ներդաշնակեցնելու եվրոպական տարբեր երկրների որակավորումների համակարգերը: Երաշխավորությունը[2] վավերացվեց Եվրախորհրդարանի և Եվրախորհրդի համատեղ որոշմամբ 2008թ.-ի հունվարին:

Հայաստանի արձագանքը

Ինչպես ՀՀ «Կրթության մասին» շրջանակային օրենքը, այնպես էլ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը որոշակի նպաստող դրույթներ և հնարավորություններ են պարունակում

[1]Եվրախորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի որոշում թիվ 1720/2006/EC:

[2]Recommendation of the European Parliament and of the Council "on the establishment of the European Qualifications Framework for lifelong learning". PE-CONS 3662/07, Brussels, 29 January 2008. 20 pages.

հարատև կրթության առանձին տարրերի և դրանց իրականացման այլընտրանքային ձևերի զարգացման համար՝ լրացուցիչ կրթություն, մասնագետների որակավորման բարձրացում, վերապատրաստում, ուսուցման էքստեռն և հեռավար ձևեր: Այնուամենայնիվ, առկա օրենսդրական հենքը դեռևս բավարար չէ հարատև կրթության ազգային համակարգի լիարժեք ձևավորման համար և որոշակի փոփոխությունների ու լրացման կարիք ունի[3]՝ Բեռլինի ու Լոնդոնի կոմյունիկեներում ձևակերպված խնդիրներին համահունչ: Մասնավորապես, պետք է հնարավորություններ ստեղծել՝ հարատև կրթության խողովակով բարձրագույն կրթության որակավորումների ձեռքբերման և այս կապակցությամբ ճկուն կրթական "հետագծերի" ու նախորդող ուսումնառության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներմուծման համար:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Բրյուգես-Կոպենհագենի գործընթաց:
http://ec.europa.eu/education/copenhagen/index_en.html

Հարատև կրթության որակավորումների եվրոպական հենքի առաջարկը:
http://ec.europa.eu/education/policies/educ/eqf/rec08_pt.pdf

2007-ի Լոնդոնի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.dfes.gov.uk/londonbologna/

Եվրահանձնաժողովի հարատև կրթության կայքէջը:
http://ec.europa.eu/education/policies/lll/lll_en.html

[3]Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: ԲԿՈՀԱԿ, Վերլուծական զեկույց: ՀՀ ԿԳՆ-ԿԱԻ, Տեղեկագիր՝ Բարձրագույն կրթություն: Երևան, 2007: էջ 186-397:

Գործողությունների 8-րդ ուղղություն
Բուհերի և ուսանողների ներգրավում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Բուհերն ու ուսանողները վճռորոշ դերակատարություն ունեն Բոլոնիայի գործընթացում: Պրագայի գագաթաժողովում (2001թ.) նախարարները կոչ են անում նրանց՝ որպես ակտիվ և կառուցողական գործընկերների, ներգրավվել տարբերացված և համադրելի ԵԲԿՏ-ի ձևավորմանը, և առանձնացնում Բոլոնիայի գործողությունների այս ասպարեզը՝ որպես 8-րդ ուղղություն: Եվրոպական բարձրագույն կրթության ներկայացուցչական մարմինները՝ Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA) և Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիան (EURASHE) ապահովում են բուհերի վճռորոշ դերակատարությունն ու "ձայնը" Բոլոնիայի գործընթացում: Համապատասխանաբար, Ուսանողների եվրոպական միությունը (ESU) ներկայացնում է Եվրոպայի ուսանողությանը և ակտիվ դերակատարություն ունի Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ընթացող հանրային բանավեճերում: Այս "հովանոցային" կազմակերպությունները Բոլոնիայի գործադիր խմբի խորհրդակցական անդամներ են:

Հենվելով Պրագայի կոմյունիկեի (2001թ.) վրա՝ Բեռլինի նախարարական գագաթաժողովը 2003-ին նշում է, որ "միայն գործընթացում բոլոր գործընկերների ակտիվ մասնակցությունն է, որ կապահովի նրա երկարաժամկետ հաջողությունը": Միաժամանակ, գագաթաժողովն անհրաժեշտ համարեց, որ բուհերն "օժտվեն իրենց ներքին կազմակերպական կառուցվածքի և վարչական կառավարման վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավասությամբ"՝ շեշտելով այդպիսով բուհական ինքնավարության կարևորությունը Բոլոնիայի գործընթացում բուհերի ակտիվ մասնակցության տեսանկյունից: Բերգենի կոմյունիկեն (2005թ.) հատկապես կարևորում է "բուհերի, նրանց ուսանողների և աշխատողների՝ որպես գործընկերների առանցքային դերը Բոլոնիայի գործընթացում":

Բոլոնիայի գործընթացի դիտարկվող ուղղությունը համալիր բնույթ է կրում և ունի մի քանի կարևոր ասպեկտներ՝

- ⇒ բուհերի դերի մեծացումը բարձրագույն կրթության Բոլոնիայի ռեֆորմներում,
- ⇒ բուհերի ինքնավարության ընդլայնումը,
- ⇒ ուսանողների դերի բարձրացումը բուհական կառավարման գործընթացներում,
- ⇒ ուսանողների ներգործությունը բարձրագույն կրթության բովանդակության վրա,
- ⇒ ուսանողների ուսումնառության և կենցաղի պայմանների բարելավումը:

Վերջին զարգացումները

Ինչպես ցույց են տվել EUA-ի վերջին ուսումնասիրությունները[1], օրենսդրության նպատակասլաց նորացման և բուհական ինքնավարության զգալի ընդլայնման շնորհիվ Բեռլինի գագաթաժողովին հաջորդած ժամանակահատվածում զգալիորեն բարձրացել են եվրոպական բուհերի դերն ու պատասխանատվությունը ԵԲԿՏ-ի կառուցման մեջ, իսկ գործընթացի ծանրության կենտրոնը քաղաքական որոշումներից և կառավարությունների գործողություններից աստիճանաբար տեղափոխվում է դեպի ռեֆորմների ներբուհական իրականացումը:

Բացի բուհական ինքնավարությունից, Բոլոնիայի գործընթացում բուհերի ներգրավվածության և դերի վրա ազդող առավել կարևոր գործոնը ռեֆորմների ֆինանսավորումն է: Ուսումնասիրված բուհերի մեծամասնությունը (շուրջ 80%) դժգոհ են Բոլոնիայի ռեֆորմների իրականացման համար անհրաժեշտ պետական բյուջետային հատկացումների բացակայությունից կամ անբավարար մակարդակից և միահամուռ նշում են Բոլոնիայի գործընթացում բուհերի ներգրավման և ակտիվ մասնակցության ֆինանսական խթանների անհրաժեշտությունը: Լոնդոնի կոմյունիկեն (2007թ.) ընդգծում է ուժեղ բուհերի կարևորությունը, որոնք “համարժեք են ֆինանսավորվում, ինքնավար են և հաշվետվունակ”:

Ուսանողների ներդրումը Բոլոնիայի գործընթացում առավել մեծանում է՝ վերջինիս սոցիալական ուղղվածության ուժեղացման կապակցությամբ: Տեսանելի է նաև ուսանողների մասնակցության ընդլայնումը որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներում, ինչը նաև ENQA-ի ստանդարտների պահանջն է: Լոնդոնի կոմյունիկեն կարևորում է հատկապես ուսանողական պատշաճ ծառայությունների ապահովումը, բարձրագույն կրթության ճկուն “հետագծերի” և սովորողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը:

Հայաստանի արձագանքը

Բերգենի գագաթաժողովից հետո զգալիորեն բարելավվել է ՀՀ բուհերի ներգրավվածության աստիճանը Բոլոնիայի գործընթացում: Դրանում զգալի ուղղորդող դեր է խաղում ՀՀ կառավարության կողմից 2006թ. նոյեմբերին հաստատված ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցը[2], որը պլանավորում է մի շարք փոխկապակցված միջոցառումներ Բոլոնիայի գործողությունների հիմնական ուղղություններով: Ըստ ուղղությունների՝ ստեղծվել են մի շարք աշխատանքային խմբեր՝ բուհերի լայն ներկայացուցչությամբ, որոնք էլ համակարգում են առանձին բուհերում կատարվող աշխատանքները, մշակում համակարգային բնույթի կանոնակարգային և ուղեցույց/մեթոդական նյութեր ու երաշխավորություններ: Բուհերի ներգրավմանը և ակտիվ մասնակցությանը Բոլոնիայի գործընթացում էական ֆինանսական, փորձագիտական և տեղեկատվական-մեթոդական աջակցություն

[1]Trends V: Universities shaping the European Higher Education Area. An EUA Report, 2007. 100pages.

[2]ՀՀ կառավարության թիվ 43-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին» (ընդունված 02.11.2006թ.):

են ցուցաբերում TEMPUS ծրագիրը, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայաստանյան հիմնադրամը, ՀՀ Կրթության ազգային ինստիտուտը և Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը, որը ներկայացնում է Հայաստանը Բոլոնիայի գործադիր խմբում:

ՀՀ «ԲՀՄԿ մասին» օրենքը սահմանում է ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարության շրջանակները և իրավասությունը: Մասնավորապես, բուհերն ինքնուրույն են իրենց կառուցվածքի որոշման, ուսումնական գործընթացի կազմակերպման, հաստիքացուցակների ձևավորման և հատկացված ֆինանսական միջոցների տնօրինման հարցերում: Օրենքը նախատեսում է նաև ուսանողների մասնակցությունը բուհերի կառավարմանը՝ բուհի, ֆակուլտետների խորհուրդների կազմում ուսանողների առնվազն 25% չափաքանակով ընդգրկման միջոցով:

ՀՀ բուհերի և նրանց ուսանողության դերակատարության ակտիվացմանն ու նախաձեռնողականությանը Բոլոնիայի գործընթացում էապես կնպաստի ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի կոորդինացման և կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործումը ինչպես բուհերի, այնպես էլ համակարգային մակարդակով: Նպատակահարմար է, մասնավորապես, բարձրագույն կրթության ազգային խորհրդի, ուսանողական ազգային միության, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին աջակցող հասարակական կառույցի ստեղծումը՝ Բոլոնիայի անդամ մյուս երկրների օրինակով: Օրակարգում են նաև Բոլոնիայի ռեֆորմների առկա ռազմավարության և օրենսդրական բազայի լրամշակումն ու նորացումը[3]:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA): http://www.eua.be/index.php

Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE): http://www.eurashe.eu/RunScript.asp?p=ASP/Pg0.asp

Ուսանողների եվրոպական միություն (ESU): http://www.esib.org/

[3] Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. Երաշխավորություններ՝ **ՀՀ բարձրագույն կրթության** համակարգում Բոլոնիայի գործընթացի հետագա զարգացման ռազմավարության և գործընթացի պահանջներից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ: **Երևան,** Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2007. 43 էջ:

Գործողությունների 9-րդ ուղղություն
Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչության խթանում

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Բոլոնիայի գործընթացի հիմնարար խնդիրներից է եվրոպական բարձրագույն կրթության մրցունակության բարձրացումը գլոբալ շուկայում, որն իր արտահայտությունն է ստացել Բոլոնիայի հռչակագրում: Այստեղ հիմնական գաղափարն այն է, որ ներդաշնակ և թափանցիկ ԵԲԿՏ-ի ստեղծումը՝ իր համադրելի և բարձր որակ ապահովող ազգային բարձրագույն կրթության համակարգերով, էական կռվան է եվրոպական բարձրագույն կրթությունը արտաքին աշխարհին ավելի գրավիչ դարձնելու համար:

2001թ.-ին Պրագայի գագաթաժողովը վերահաստատեց ԵԲԿՏ-ի գրավչությանն աջակցելու կարևորությունը և ձևակերպեց այս խնդիրը որպես Բոլոնիայի գործողությունների ինքնուրույն ուղղություն, թեև այն ունի նաև փոխկապակցող նշանակություն Բոլոնիայի այլ ուղղությունների համար: Կարևորելով եվրոպական բարձրագույն կրթության արտաքին գրավչությունը և բաց բնույթը՝ Բեռլինի գագաթաժողովն (2003թ.) ընդգծում է այլ տարածաշրջանների հետ համագործակցության զարգացման և Բոլոնիայի գործընթացի գլոբալացման անհրաժեշտությունը:

Բոլոնիայի գործընթացի դիտարկվող այս ուղղության խթանման համար մեծ դեր խաղաց Բերգենի գագաթաժողովը (2005թ.), որտեղ առաջին անգամ շեշտվեց Բոլոնիայի գործընթացի սոցիալական ուղղվածությունը՝ “որպես ԵԲԿՏ-ի գրավչության և մրցունակության նախապայման”: Այստեղ հատկապես կարևորվել է Բոլոնիայի գործընթացի գլոբալացման և արտաքին չափայնության ասպեկտը, իսկ Բոլոնիայի գործադիր խմբին առաջարկվել է մշակել արտաքին չափայնության այնպիսի ռազմավարություն, որն ապահովի Բոլոնիայի գործընթացի բաց բնույթը այլ աշխարհամասերի համար և նպաստի եվրոպական բարձրագույն կրթության գրավչության բարձրացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինստիտուցիոնալ մակարդակով ԵԲԿՏ-ի գրավչության աջակցման հիմնական գործիքներն են՝ համատեղ ծրագրերը, այդ թվում՝ ԵԲԿՏ-ից դուրս գտնվող բուհերի հետ, միջազգային շարժունությունը, ուսանողների հավաքագրումը աշխարհի այլ մասերից, սոցիալական ուղղվածության ամրապնդումը, փոխճանաչման բարելավումը, միջբուհական համագործակցությունը այլ տարածաշրջանների հետ:

Վերջին զարգացումները

Անդրադառնալով ԵԲԿՏ-ի գլոբալ համատեքստին՝ 2007թ.-ին Լոնդոնի գագաթաժողովը գոհունակությամբ նշում է, որ “Բոլոնիայի ռեֆորմները աշխարհի տարբեր մասերում առաջ են բերել զգալի հետաքրքրություն և խթանել քննարկումները եվրոպական ու միջազգային գործընկերների միջև՝ խնդիրների լայն միջակայքում”: Ավելին, գնահատանքով է ընդգծվում այն փաստը, որ եվրոպական տարածքից դուրս որոշ երկրներ ձգտում են համա-

պատասխանեցնել իրենց բարձրագույն կրթության համակարգերը Բոլոնիայի հենքին:

Լոնդոնյան գագաթաժողովի կարևորագույն իրադարձություններից էր դեռևս Բերգենում ծրագրված "Եվրոպական բարձրագույն կրթական տարածքը՝ գլոբալ դրվածքով" ռազմավարության ընդունումը, որտեղ առանձնանում են ԵԲԿՏ գլոբալացման քաղաքականության 5 առաջնային ասպարեզներ՝ ԵԲԿՏ-ի վերաբերյալ տեղեկատվության բարելավումը, նրա գրավչության ու մրցունակության խթանումը, գործակցային հիմքի վրա կառուցված համագործակցության ամրապնդումը, քաղաքականության վերաբերյալ երկխոսության ինտենսիվացումը և որակավորումների ճանաչման բարելավումը: Միաժամանակ, Բոլոնիայի գործադիր խմբին հանձնարարվել է մինչև 2009թ. հաշվետվություն պատրաստել այդ ռազմավարության իրականացման վերաբերյալ՝ արտացոլելով ընդհանուր զարգացումները եվրոպական, ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում, ընդ որում, առաջնություն է տրվում 2 ուղղությունների՝ տեղեկատվության բարելավում և փոխճանաչում՝ Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիայի հիման վրա:

Բոլոնիայի 2007÷2009թթ. աշխատանքային ծրագիրը[1] նախատեսում է որոշակի հաջորդող գործողություններ՝ Լոնդոնյան կոմյունիկեում առաջադրված խնդիրների իրագործման համար՝ ԵԲԿՏ-ի գլոբալ չափայնության ռազմավարության բոլոր 5 առաջնային ուղղություններով:

Հայաստանի արձագանքը

2005թ.-ի Բերգենի գագաթաժողովից հետո, երբ Հայաստանը պաշտոնապես դարձավ Բոլոնիայի գործընթացի անդամ երկիր, ՀՀ բարձրագույն կրթության համակարգում առկա է էական առաջընթաց ԵԲԿՏ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածման, գովազդի և բուհական համայնքի տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ: ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը Tempus-ի հայաստանյան գրասենյակի, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայաստանյան հիմնադրամի և Բոլոնիայի գործընթացի դերակատար եվրոպական կառույցների օժանդակությամբ կազմակերպել է մի շարք սեմինարներ և խորհրդակցություններ, հրատարակել հայերեն լեզվով տեղեկատվական/ մեթոդական նյութեր:

Որոշ առաջընթաց է արձանագրվել նաև ԵԲԿՏ-ի գրավչության աջակցման ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացման ուղղությամբ՝ համատեղ ծրագրեր եվրոպական բուհերի մասնակցությամբ, որակավորումների փոխճանաչման բարելավում, միջազգային ակադեմիական շարժունության ընդլայնում: Բարելավվել են ցուցանիշները նաև Բոլոնիայի ոչ անդամ երկրներից ուսանողների հավաքագրման ուղղությամբ, որին հատկապես նպաստել է անգլալեզու ուսուցման կազմակերպումը ՀՀ որոշ բուհերում (ՀՊՃՀ, ԵՊԲՀ և այլն):

Հայաստանի ընդլայնված ներգրավումը և ակտիվ մասնակցությունը ԵԲԿՏ-ի գլոբալ չափայնության ռազմավարության իրականացմանը, հատկա-

[1] "Towards the European Higher Education Area – An Integreted Work Programme for 2007-2009". Bologna work programme 2007-2009 (consolidated version of 14/01/2008). Issue date: 09 January 2008. 26 pages.

պես փոխճանաչման բարելավման և միջազգային շարժունության խթանման ուղղություններով, էական դեր կարող է խաղալ նաև երկրի բարձրագույն կրթության մրցունակության բարձրացման և արտասահմանյան ուսանողների ներհոսքի խթանման գործում:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Erasmus Mundus ծրագիրը: http://ec.europa.eu/education/prorammes/mundus/index_en.html

Պրագայի կոմյունիկե, 2001:
http://www.bologna-berlin2003.de/pdf/Prague_communiquTheta.pdf

Լոնդոնի կոմյունիկե, 2007:
http://www.dfes.gov.uk/londonbologna/uploads/documents/LC18May07.pdf

Բոլոնիայի գործընթացի 2007- 2009թթ. աշխատանքային ծրագիրը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/Boogna_work_programme_2007-2009_030308.pdf

Գործողությունների 10-րդ ուղղություն
Դոկտորական ծրագիրը և սիներգիան Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև

Հիմնական իրադարձություններ և կարգավորիչ փաստաթղթեր

Բոլոնիայի գործընթացում հետազոտությունները դիտվում են որպես եվրոպական բարձրագույն կրթության ինտեգրալ մաս: 2003թ.-ին Բեռլինի գագաթաժողովը ներմուծեց Բոլոնիայի գործողությունների նոր ուղղություն՝ դոկտորական մակարդակի որակավորումների վերաբերյալ, պաշտոնապես ընդգրկելով դրանք Բոլոնիայի գործընթացում՝ որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան: Դրանով կապ հաստատվեց ԵԲԿՏ-ի ստեղծմանն ուղղված Բոլոնիայի գործընթացի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) ձևավորման Եվրոպական միության հայտնի նախաձեռնության միջև: Այս ուղղության զարգացումը հատկապես կարևորվում է նրանով, որ և՛ կրթությունը, և՛ գիտությունը առանցքային դերակատարություն ունեն Եվրոպական միության Լիսաբոնյան ստրատեգիայում:

2005թ.-ին Բերգենի նախարարական գագաթաժողովը լիազորեց Եվրոպական համալսարանական ասոցիացիային (EUA)՝ մշակելու "դոկտորական ծրագրերի հիմնարար սկզբունքներ՝ 2007թ.-ի Լոնդոնի գագաթաժողովին ներկայացնելու համար": EUA-ի զեկույցի համար հիմք հանդիսացան Զալցբուրգյան 10 հայտնի սկզբունքները, որոնք նախ՝ ձևավորվեցին 2005թ.-ին Զալցբուրգում կայացած Բոլոնիայի սեմինարում[1] և ապա՝ ամփոփվեցին երաշխավորությունների տեսքով 2006թ.-ին Նիցցայի եզրափակիչ սեմինարում[2]:

2005թ.-ին Եվրոպական միությունն ընդունեց Հետազոտողների եվրոպական խարտիան[3] և Հետազոտողների հավաքագրման ընթացակարգի կոդեքսը[4], որոնք խթանող դեր ունեն Եվրոպայում հետազոտողի կարգավիճակի ամրապնդման և հետազոտական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծման գործում:

Վերջին զարգացումները

2007թ.-ին Լոնդոնյան գագաթաժողովը կրկին կարևորեց ԵԲԿՏ-ի և ԵՀՏ-ի ներդաշնակեցման խնդիրը, ընդգծելով դոկտորական ծրագրերի

---

[1]Bologna Seminar on "Doctoral Programmes for the European Knowledge Society" (Salzburg, 3-5 February 2005). Conclusions and Recommendations. 3p.

[2]"Matching Ambition with Responsibilities and Resources". Bologna Seminar on Doctoral Programmes (Nice, 7-9 December 2006). Final Conclusions - Preparing Recommendations for the London Communiqué. 5p.

[3]European Presidency Conference "A researchers' labour market: Europe a pole of attraction? The European Charter for Researchers and the Code of Conduct for their Recruitment as a driving force for enhancing career prospects", 1-2 June, 2006. Main outcomes of the conference, 6p.

[4]The European Charter for Researchers / The Code of Conduct for the Recruitment of Researchers. European Commission. Directorate-General for Research. Human resources and mobility (Marie Curie Actions) EUR 21620. 2005, 36p.

այլընտրանքային ձևերի բազմազանության ապահովման նպատակահարմարությունը, որոնք պետք է համապատասխանեն ԵԲԿՏ որակավորումների հենքի ընդհանուր պահանջներին: Ընդգծվում է նաև երրորդ աստիճանում ուսուցման կատարելագործման, դոկտորական որակավորման թեկնածուների կարգավիճակի ու կարիերայի հեռանկարների և ֆինանսական ապահովման բարելավման անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է, որ բուհերը պետք է ներառեն և կարևորեն երրորդ աստիճանն իրենց ինստիտուցիոնալ ստրատեգիաներում: Միաժամանակ, նախարարներն առաջարկում են շարունակել փորձի միջբուհական փոխանակումը իննովացիոն բնույթի դոկտորական ծրագրերի տարատեսակների, փոխանցելի հետազոտական ձիրքերի զարգացման, ծառայունակության բարձրացման, մուտքի մատչելիության ու թափանցիկության և այլ հիմնահարցերի վերաբերյալ: Լոնդոնյան գագաթաժողովում ներկայացվել է նաև EUA-ի ամփոփիչ զեկույցը[5] դոկտորական ծրագրերի վերաբերյալ՝ իր 9 եզրակացություններով:

Այսօր Եվրոպայում գերիշխող է այն տեսակետը, որ Բոլոնիայի պահանջներն այս ասպարեզում պետք է շարունակեն մնալ շատ ճկուն, որպեսզի ընդհանուր շրջանակներում մեկտեղվեն եվրոպական դոկտորական ծրագրերը՝ որպես լայն սպեկտր, որոնք իրարից տարբերվում են իրենց նպատակային ուղղվածությամբ, ժամկետներով և մատուցման ձևերով: Դոկտորական ծրագրերը պետք է միաժամանակ բավարարեն որոշակի ակադեմիական ստանդարտները և հետազոտական աշխատուժի շուկայի կարիքները, իսկ առաջարկվող հետազոտական կրթությունը պետք է օժտի ապագա հետազոտողներին գիտական գործունեության համար անհրաժեշտ ձիրքերով ու կարողություններով:

Հայաստանի արձագանքը

Հետբուհական կրթական ծրագրերը ՀՀ բուհերում և գիտական կազմակերպություններում շարունակում են իրականացվել ավանդական մոդելին համապատասխան և, բացառությամբ ՀՊՃՀ-ի, դեռևս չեն վերակառուցվել՝ Բոլոնիայի գործընթացի նորագույն պահանջներին համապատասխան: Ունենալով գերիշխող հետազոտական ուղղվածություն որոշակի գիտական մասնագիտության շրջանակներում՝ այս մոդելը նպատակաուղղված չէ հետազոտողին անհրաժեշտ ընդհանուր (փոխանցելի) աշխատանքային ձիրքերի ու կարողությունների ձևավորմանը:

Ասպիրանտուրայում ստրուկտուրացված կրթական ծրագրի և համապատասխան որակավորման ներմուծման առաջին փորձը Հայաստանում կատարվել է ՀՊՃՀ-ում: 1992թ.-ից, ՀՀ Կառավարության կողմից հաստատված բուհի գլխավոր պլանի և օրինադրության համապատասխան, այստեղ գործում է հետազոտողի երկամյա (այժմ եռամյա) կրթական ծրագիր, որն ինտեգրված է ասպիրանտուրայի եռամյա ծրագրում և ավարտվում է հետազոտողի որակավորման շնորհմամբ: Հետազոտողի ծրագիրն ավարտած և նույնանուն որակավորում ստացած ասպիրանտներին ատենախոսության պաշտպանության հիման վրա շնորհվում է նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ ՀՀ ԲՈՀ[6]-ի պահանջներին համապատասխան: 2004թ.-

[5]Doctoral Programmes in Europe's Universities: Achievements and Challenges. Report Prepared for European Universities and Ministries of Higher Education // EUA Publications 2007. – 39p.

[6]Բարձրագույն որակավորման հանձնաժողով

ից հետազոտողի ծրագիրը ՀՊՃՀ-ում վերակառուցվել է կրեդիտային հենքով և ստացել մոդուլային կառուցվածք: Ծրագրի աշխատածավալը համարժեք է 120 ECTS կրեդիտային միավորների, որոնք հավասարապես բախշված են ծրագրի կրթական և հետազոտական կառուցամասերի միջև:

Հետազոտողի որակավորումը և ծրագրի եռամյա տևողությունը 1999թ.-ին ամրագրվել են ՀՀ «Կրթության մասին» օրենքում, իսկ 2002թ.-ին՝ ՀՀ «ԲՀՄԿ մասին» օրենքում, ինչը իրավական հիմք է ստեղծում հետբուհական կրթությունը որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան վերակազմակերպելու համար: ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ՀՀ կառավարության հաստատած ժամանակացույցը նախատեսում է հետբուհական կրթության բարեփոխումների հայեցակարգի ու ժամանակացույցի մշակում և հաստատում: Վերջերս մշակվել են Բոլոնիայի գործընթացի համատեքստում ՀՀ հետբուհական կրթության վերակառուցման ռազմավարության հիմնադրույթները[7], որոնք հավանության են արժանացել Կրթության և գիտության նախարարության կողմից:

[7]Յու.Լ. Սարգսյան, Ա.Ս. Բուդաղյան. ՀՀ Հետբուհական կրթության վերակառուցումը Բոլոնիայի գործընթացի համատեքստում: Բարեփոխումների ռազմավարության հիմնադրույթներ: Երևան, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2007. 25 էջ:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Բեռլինի կոմյունիկե, 2003: http://www.bologna-berlin2003.de/pdf/Communique1.pdf

Լոնդոնի կոմյունիկե, 2007: http://www.dfes.gov.uk/londonbologna/uploads/documents/LC18May07.pdf

Եվրահանձնաժողովի Եվրոպական հետազոտական տարածքի կայքէջը: http://ec.europa.eu/research/era/index_en.html

“Գիտության Եվրոպա 2020” Եվրահանձնաժողովի կոնֆերանսը (Լյեժ, 2004): http://ec.europa.eu/research/conferences/2004/univ/index_en.html

Եվրոպական համալսարանական ասոցիացիա (EUA): http://www.eua.be/index.php

EUA-ի դոկտորական ծրագրերի նախագիծը: http://www.eua.be/index.php?id=107

“Դոկտորական ծրագրերը եվրոպական համալսարաններում” EUA-ի զեկույցը (2007): http://www.eua.be/fileadmin/user_upload/files/Publications/Doctoral_Programmes_in_Europe_s_Universities.pdf

“Դոկտորական ծրագրերը գիտելիքի Եվրոպայում” Բոլոնիայի սեմինարը (Զալցբուրգ, 2005) http://www.aic.lv/ace/ace_disk/Bologna/Bol_semin/Salzburg/index.HTM

“Դոկտորական ծրագրերը Եվրոպայում” Բոլոնիայի սեմինարը (Նիցցա, 2006): http://www.eua.be/index.php?id=121

Բոլոնիայի գործընթացը 2010-ից հետո

2010թ.-ը այն պայմանական և վաղուց հռչակված փուլանիշն է, որը պետք է նշանավորի Բոլոնիայի գործընթացի ավարտը և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) մեկնարկը: Որքան մոտենում է 2010-ը, այնքան ավելի պարզորոշ է դառնում, որ Բոլոնիայի հովանու ներքո սկիզբ առած գործընթացները չեն կարող կտրուկ ավարտվել կամ լիովին սպառել իրենց օրակարգը և որոշակիորեն կարգավորվող շարունակություն են պահանջում ինչպես եվրոպական, այնպես էլ ազգային մակարդակներում:

Անդրադառնալով այս կարևորագույն խնդրին՝ Լոնդոնի կոմյունիկեն նշում է. “Քանի որ ԵԲԿՏ-ն շարունակում է զարգանալ և արձագանքել գլոբալացման մարտահրավերներին, մենք ակնկալում ենք, որ համագործակցության կարիք կլինի նաև 2010-ից հետո”: Այնուհետև նախարարները հայտնում են իրենց մտադրությունը՝ օգտագործելու 2010-ի փուլանիշը և վերակարգավորելու իրենց բարձրագույն կրթության համակարգերի հետագա ընթացքը՝ նպատակաուղղելով վերջինս անմիջական խնդիրներից դեպի ավելի հեռու ժամանակահատված և նախապատրաստելով համակարգերը այն նոր մարտահրավերներին, որոնք կորոշեն դրանց ապագան: Այս կապակցությամբ կոմյունիկեի շրջանակներում Բոլոնիայի գործադիր խումբը ստացել է 2 հիմնական առաջադրանք.

⇒ 2009թ.-ի նախարարական գագաթաժողովի համար ստեղծել Զեկույց, թե ինչպես պետք է ԵԲԿՏ-ն զարգանա 2010-ից հետո,

⇒ նախապատրաստել Բոլոնիայի գործընթացի ամփոփիչ Զեկույց, որը կընդգրկի 1999թ.-ից գործընթացի առաջընթացի անկախ գնահատում՝ գործողությունների բոլոր ուղղություններով:

“2010-ից հետո” զեկույցը պետք է ստեղծվի բաց և թափանցիկ գործընթացով, որը կընդգրկի Բոլոնիայի գործընթացի մասնակից բոլոր երկրներն ու կազմակերպությունները, իսկ քննարկումները կկազմակերպվեն ինչպես էլեկտրոնային ճանապարհով, այնպես էլ Բոլոնիայի գործադիր խմբի անմիջական հանդիպումների միջոցով: Այս առումով կարևորվում է Հայաստանի լիարժեք համակարգված մասնակցությունը Զեկույցի ձևավորմանը, որը փաստորեն ուրվագծելու է Բոլոնիայի գործընթացի շարունակությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում: Շատ կարևոր է այսօր արդեն նախանշել, թե ինչ վիճակով և ինչ ներուժով կդիմավորի մեր բարձրագույն կրթության համակարգը 2010-ի փուլանիշը: Անհրաժեշտ կլինի սահմանել հստակ և չափելի սահմանային ցուցանիշներ 2010թ.-ի համար, որոնք պետք է բնութագրեն համակարգի առաջընթացը Բոլոնիայի գործընթացի բոլոր 10 ուղղություններով:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ

Լոնդոնի կոմյունիկե, 2007:
http://www.dfes.gov.uk/londonbologna/uploads/documents/LC18May07.pdf

2007-ի Լոնդոնի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.dfes.gov.uk/londonbologna/

2009-ի Բենիլյուքսի նախարարական գագաթաժողովի կայքէջը:
http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/

Բոլոնիայի գործընթացի տերմինարան

Տերմինարանի համար հիմք են ծառայել Մեծ Բրիտանիայի բարձրագույն կրթության եվրոպական բաժանմունքի եվրոպական բարձրագույն կրթության տերմինների բառարանը[1] և ավելի վաղ հրատարակված Բոլոնիայի գործընթացի տերմինարանը[2]: Սույն տերմինարանն ընդգրկում է ուղեցույցում օգտագործված Բոլոնիայի գործընթացին առնչվող հիմնական տերմինները և դրանց սահմանումները:

Բարձրագույն կրթության աստիճաններ (Higher education cycles)

Բոլոնիայի գործընթացով սահմանված երեք իրարահաջորդ որակավորման մակարդակներ՝ առաջին աստիճան, երկրորդ աստիճան և երրորդ աստիճան, որոնք ընդգրկում են բարձրագույն կրթության բոլոր որակավորումները:

Բարձրագույն կրթության որակավորումների ազգային հենք (National qualifications framework for higher education)

Ազգային կրթական համակարգի միասնական նկարագրություն, որը միջազգայնորեն ընկալելի է, որի միջոցով կարող են նկարագրվել ու ներդաշնակորեն համադրվել բարձրագույն կրթության բոլոր որակավորումներն ու ուսումնառության այլ արդյունքները, և որը որոշում է հարաբերակցությունները բարձրագույն կրթության որակավորումների միջև:

Բոլոնիայի գործադիր խումբ (Bologna Follow-up Group, BFUG)

Վերահսկում է Բոլոնիայի նախարարական գագաթաժողովների որոշումների իրականացումը, Բոլոնիայի գործընթացի ընդհանուր ընթացքը և հաջորդ նախարարական գագաթաժողովի նախապատրաստումը:

Բոլոնիայի գործընթաց (Bologna process)

Միջպետական նախաձեռնություն, որի նպատակն է մինչև 2010թ.-ը ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ): Այն այսօր ներառում է 46 ստորագրյալ երկրներ և իրականացվում է Եվրոպական միության որոշումների ընդունման պաշտոնական շրջանակներից դուրս:

Բոլոնիայի խորհուրդ (Bologna board)

Աջակցում է Բոլոնիայի գործադիր խմբին իր գործողություններում, օժանդակում՝ համակարգելու և գնահատելու Բոլոնիայի աշխատանքային ծրագրի իրականացման ընթացքը:

---

[1] http://www.europeunit.ac.uk/sites/europe_unit2/glossary_of_european_he_terms/index.cfm

[2] http://www.bologna-bergen2005.no/

Բոլոնիայի նախարարական գագաթաժողովներ (Bologna ministerial summits)

Բոլոնիայի հռչակագիրը ստորագրելուց հետո անդամ երկրների բարձրագույն կրթության նախարարների երկամյա պարբերականությամբ հրավիրվող հանդիպումներ, որոնց նպատակն է գնահատել առաջընթացը Բոլոնիայի գործողությունների ուղղություններով, ուղղորդել գործընթացի հետագա ընթացքը և սահմանել գերակայություններ հաջորդ 2 տարիների համար:

Բոլոնիայի քարտուղարություն (Bologna secretariat)

Տեղեկատվություն է ապահովում Բոլոնիայի գործընթացի զարգացումների վերաբերյալ, կազմակերպում է Բոլոնիայի գործադիր խմբի և Բոլոնիայի խորհրդի աշխատանքները: Այն գործում է հաջորդ նախարարական գագաթաժողովը հյուրընկալող երկրում:

Գործողությունների ուղղություններ (Action lines)

Բոլոնիայի գործընթացն ունի գործողությունների 10 ուղղություններ, որոնք նպատակաուղղում են գործընթացի ընդհանուր խնդիրների իրականացումը:

Դիպլոմի հավելված (Diploma supplement)

Բուհերի կողմից շրջանավարտներին շնորհված որակավորումը ստանդարտ ձևաթերթով նկարագրող և նրանց հանձնվող փաստաթուղթ, որը դյուրընկալելի և համեմատելի է:

Դուբլինյան բնութագրիչներ (Dublin descriptors)

Բարձրագույն կրթության աստիճանների համահամաձայնեցված բնութագրիչներ՝ ԵԲԿՏ-ի որակավորումների հենքի շրջանակներում, որոնք մշակվել են “Որակի համատեղ նախաձեռնություն” եվրոպական ցանցի կողմից:

ԵԲԿՏ-ի որակավորումների հենք (Framework for Qualifications of the EHEA)

Որակավորումների համակապակցող հենք, որը թափանցիկ է դարձնում հարաբերակցությունը ԵԲԿՏ որակավորումների ազգային հենքերի և դրանց պարունակած որակավորումների միջև: Սա որակավորումների տարբեր ազգային հենքերի փոխկապակցման մեխանիզմ է:

ԵՄ ինտեգրացված գործողությունների ծրագիր հարատև կրթության համար (EU integrated action programme for lifelong learning)

Մեկնարկել է 2007թ.-ին և մեկտեղում է դպրոցական կրթության (Comenius), բարձրագույն կրթության (ERASMUS), միջին մասնագիտական և արհեստագործական կրթության (Leonardo da Vinci) և մեծահասակների կրթության (Grundvig) ճյուղային ծրագրերը:

Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (European Higher Education Area, EHEA)

Բոլոնիայի գործընթացի վերջնանպատակը՝ մինչև 2010թ.-ը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) կառուցումը, որտեղ ուսանողներն ու դասախոսները ազատ տեղաշարժի և իրենց որակավորումների ճանաչման հնարավորություն կունենան: ԵԲԿՏ-ի հիմնարար սկզբունքներն են՝ երեք աստիճանների (փուլերի) վրա հիմնված բարձրագույն կրթության համակարգը, որակավորումների համակապակցող հենքը, որակի ապահովման միասնական մոտեցումները, որակավորումների և ուսումնառության ժամանակահատվածների փոխճանաչումը և բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությունը:

Եվրոպական հետազոտական տարածք (European Research Area ERA)

Եվրամիության Լիսաբոնյան ստրատեգիայի հիմնական տարրերից է, որի գաղափարը սկիզբ է առել 2000թ.-ին՝ Եվրահանձնաժողովի "Դեպի եվրոպական հետազոտական տարածք (ԵՀՏ)" զեկույցից: ԵՀՏ-ի անկյունաքարերն են հետազոտությունների ընդհանուր եվրոպական "ներքին շուկան"՝ հետազոտողների, գիտելիքների և տեխնոլոգիաների ազատ տեղաշարժի հնարավորությամբ, ազգային ու տարածաշրջանային հետազոտական ծրագրերի և քաղաքականության համաեվրոպական համակարգումը և եվրոպական մակարդակով ֆինանսավորվող ու իրականացվող հետազոտական համալիր նախաձեռնությունները:

E-4 խումբ (EUA, ENQA, EURASHE, ESU)

Որակի ասպարեզում եվրոպական համագործակցության կառուցվածք, որը կազմված է Եվրոպական համալսարանական ասոցիացիայից (EUA), Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայից (ENQA), Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիայից (EURASHE) և Ուսանողների եվրոպական միությունից (ESU):

Լիսաբոնի փոխճանաչման կոնվենցիա (Lisbon Recognition Convention)

Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման կոնվենցիա, որը համատեղ ընդունվել է Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1997թ.-ին: Նպատակ ունի ապահովելու եվրոպական որևէ երկրում շնորհված որակավորման ճանաչումն այլ եվրոպական երկրներում՝ բացառելով որևէ խտրականություն որակավորումը կրողի նկատմամբ:

Լիսաբոնյան ստրատեգիա (Lisbon Strategy)

Եվրախորհրդի կողմից 2000թ.-ին Լիսաբոնում առաջադրված 10-ամյա ստրատեգիա, որի նպատակն է դարձնել Եվրոպական միությունը "աշխարհում ամենամրցունակ և դինամիկ գիտահենք տնտեսական տարածքը"՝ ապահովելով կայուն տնտեսական աճ, ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղեր:

Կրեդիտ (Credit)

Դասընթացն ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր, որը տրվում է ուսանողին այդ կրթական արդյունքների դրական գնահատման հիման վրա:

Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ (European Credit Transfer System, ECTS)

Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված կրեդիտների փոխանցման և կուտակման միասնական համաեվրոպական համակարգ, որում ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է ԵԲԿՏ-ում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, համեմատման և բուհից բուհ փոխանցման համար՝ դյուրացնելով ուսանողների շարժունությունը և արտերկրների բուհերում նրանց ուսումնառության ժամանակաշրջանների միջազգային ճանաչումը:

Ելքային կրթական արդյունք (Learning outcome)

Ձևակերպում այն մասին, թե ինչ պետք է իմանա, հասկանա և/կամ կարողանա անել սովորողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը սովորաբար արտահայտվում է գիտելիքով, հմտություններով և կարողություններով:

Համատեղ որակավորման աստիճան (Joint degree)

Բարձրագույն կրթության որակավորում, որը համատեղ շնորհվում է 2 կամ ավելի բուհերի կողմից՝ համատեղ կրթական ծրագրի իրականացման արդյունքում:

Համատեղ կրթական ծրագիր (Joint study programme)

Երկու կամ ավելի բուհերի կողմից մշակված և/կամ իրականացված կրթական ծրագիր (հնարավոր է նաև այլ բուհերի հետ համագործակցությամբ):

Ճանաչում/ակադեմիական ճանաչում (Recognition/academic recognition)

Լիազորված մարմնի կողմից օտարերկրյա որակավորման իսկության պաշտոնական ճանաչում (հավաստում)՝ որակավորումը կրողի մուտքը կրթական նոր աստիճան և/կամ աշխատանքային գործունեություն արտոնելու համար:

Նախորդող ուսումնառության ճանաչում (Recognition of prior learning)

Նախորդ փուլում աշխատանքային փորձառության, ոչ ֆորմալ ուսումնառության և կյանքի ընթացքում ձեռք բերված հմտությունների, գիտելիքի և կարողությունների պաշտոնական ճանաչում (հաստատում):

Որակավորման բնութագրիչներ (Qualification descriptors)

Ուսուցման արդյունքների ընդհանուր ձևակերպումներ (տե՛ս Դուբլինյան բնութագրիչներ):

Որակի ապահովում/հավաստում (Quality assurance)

Բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, հավաստման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:

Որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ (European Standards and Guidelines for Quality Assurance)

Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ.-ի Բերգենի գագաթաժողովում ընդունված փաստաթուղթ, որը ներառում է եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ որակի ներքին ու արտաքին ապահովման և որակի ապահովման եվրոպական գործակալությունների համար, ինչպես նաև երաշխավորություններ՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրի և Որակի ապահովման եվրոպական խորհրդատվական ֆորումի ստեղծման վերաբերյալ:

Ուսումնական բեռնվածություն (Workload)

Քանակական չափ՝ ծրագրի նախանշված ելքային կրթական արդյունքներին հասնելու համար ուսանողից փաստացի պահանջվող ուսումնական գործունեության (օրինակ, հաճախել դասախոսություններին, սեմինարներին և գործնական պարապմունքներին, կատարել անհատական աշխատանքներ և հետազոտություններ, ձեռք բերել տեղեկատվություն, նախապատրաստվել քննություններին և այլն) վերաբերյալ:

Փոխճանաչում (Mutual recognition)

Համաձայնություն երկու կամ ավելի երկրների կամ ուսումնական հաստատությունների միջև՝ որակավորումները (որակավորման աստիճանները), կրթական ծրագրերը և ուսումնառության ժամանակաշրջանները ճանաչելու մասին:

Օգտագործված հապավումներ

BFUG	Բոլոնիայի գործադիր խումբ (Bologna Follow-up Group)
DS	Դիպլոմի հավելված (Diploma Supplement)
E4 խումբ	EUA-ից, ENQA-ից, EURASHE-ից և ESU-ից կազմված խումբ
ECA	Հավատարմագրման եվրոպական կոնսորցիում (European Consortium for Accreditation)
ECTS	Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ (European Credit Transfer and Accumulation System)
ECVET	Միջին մասնագիտական և արհեստագործական կրթության եվրոպական կրեդիտային համակարգ (European Credit System for Vocational Education and Training)
EI	“Միջազգային կրթություն” համաեվրոպական կառույց (Education International Pan European Structure)
ENIC	Տեղեկատվական կենտրոնների եվրոպական ցանց (European Network of Information Centres)
ENQA	Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (European Association for Quality Assurance in Higher Education)
EQAR	Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստր (European Quality Assurance Register for Higher Education)
EQF	Հարատև կրթության որակավորումների եվրոպական հենք (European Qualifications Framework for Lifelong Learning)
ESG	Որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղեցիներ (European Standards and Guidelines for Quality Assurance)
ESU (նախկինում ESIB)	Ուսանողների եվրոպական միություն (European Students’ Union)
EUA	Եվրոպական համալսարանական ասոցիացիա (European University Association)
EURASHE	Բարձրագույն կրթության հաստատությունների եվրոպական ասոցիացիա (European Association of Institutions in Higher Education)
EUROSTAT	Եվրահամայնքի երկրների վիճակագրական գրասենյակ (Statistical Office of the European Communities)
LLL	Հարատև կրթություն (Lifelong Learning)
LRC	Լիսաբոնյան փոխճանաչման կոնվենցիա (Lisbon Recognition Convention)
NARIC	Ակադեմիական փոխճանաչման ազգային տեղեկատվական կենտրոններ (National Academic Recognition Information Centres)

OECD	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organisation for Economic Co-operation and Development)
QF	ԵԲԿՏ որակավորումների հենք (Framework of Qualifications for the EHEA)
UNESCO	Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (United Nations Educational, Scientific and Cultural Organization)
UNESCO-CEPES	UNESCO-ի Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոն (UNESCO's European Centre for Higher Education)
ԲՀԻ ՕՀՀ	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան
ԲՀՄԿ	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն
ԳՊՄԻ	Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
ԵԲԿՏ	Եվրոպական բարձրագույն կրթության տարածք
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՀՏ	Եվրոպական հետազոտական տարածք
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՊԲՀ	Երևանի պետական բժշկական համալսարան
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ՀՊՏՀ	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ԿԳՆ	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՊԱՀ	Հայաստանի պետական ագրարային համալսարան
ՀՊՃՀ	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան
ՎՊՄԻ	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

ՍԱՐԳՍՅԱՆ Յու.Լ., ԲՈՒԴԱՂՅԱՆ Ա.Ս.

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՂԵՑՈՒՅՑ

bologna process
benelux
2009

© ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ 2008թ.

ISBN 978-9939-51-038-5